

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Մեր հայրենակից Գեորգ Հարությունյանի փրիումֆը «Նոր ալիք-2018» երաժշտական մրցույթում. շնորհավորում ենք

Սեպտեմբերի 4-ին մեկնարկել է մինչև սեպտեմբերի 9-ը շարունակվել է «Նոր ալիք-2018» երաժշտական մրցույթը: Մրցութային առաջին օրը Գեորգը կատարել է Լաուրա Պերգոլիցի (Laura Pergolizzi) «Lost on You» երգը՝ ստանալով առավելագույն 100 միավոր:

«Նոր ալիք-2018» երաժշտական մրցույթի երկրորդ մրցութային օրը մասնակիցները կատարել են իրենց երկրների հիթերը:

Հայաստանը ներկայացնող Գեորգ Հարությունյանը համոզեց է եկել «Կյանք ու կռիվ» երգով՝ ստանալով առավելագույն 100 միավոր:

Մրցույթի առաջին եւ երկրորդ օրն առավելագույն 100 միավոր ստացել է միայն Գ. Հարությունյանը:

Մրցութային երրորդ օրը մասնակիցները

ներկայացել են իրենց սեփական երգացանկից կատարումով:

Մասնակիցները գնահատվում են ժյուրիի 10 անդամի կողմից՝ յուրաքանչյուրը 10-ը միավորային սանդղակով:

Մրցույթին մասնակցել է 15 կատարող Ռուսաստանից, Իտալիայից, Մալթայից, Հունաստանից, Ադրբեջանից, Կանադայից, Ռազախաստանից, Ուկրաինայից, Բուլղարիայից:

Բնապահպանության նախարարը Սյունիքում

Բնապահպանության նախարարության ստորաբաժանումների գործունեությանը, մասնավորապես, հատուկ պահպանվող տարածքներին աջակցության ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով երկօրյա այցով Սյունիքում էր բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանը: Նրան ուղեկցում էին նախարարի տեղակալ Գնել Սանոսյանը, կենսաբազմազանության կառավարման գործակալության պետ Արտյոմ Թարգյանը, նախարարության աշխատակիցներ, լրագրողներ: Պատվիրակության կազմում էր գերմանական զարգացման բանկի (KfW) Արեւելյան Եվրոպայի, Կովկասի, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների էներգետիկայի եւ բնական պաշարների ծրագրի գլխավոր մասնագետ Ալվարո Բերիելը:

Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ հանդիպում Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանի, բնապահպանության նախարարության մարզային եւ տեղական կառույցների ղեկավարների հետ: Նախարարը, նախեառաջ, ներկայացրեց առաջիկայում ներկայացվելիք ծրագրերը, տեղեկացրեց, որ «Հայանտառի» Կապանի մասնաճյուղի միջոցով Շիկահողի եւ հարակից գյուղերի բնակիչներին 2300 խորանարդ մետր վառելափայտ է հատկացվելու:

Գերմանական բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակում «Հայանտառի» Կապանի անտառտնտեսությանը եւ Ջանգեզուրի կենսոլորտային համալիրին նոր մեքենաներ էին հատկացվել, որոնք ցուցադրված էին Գարեգին Նժդեհի հրապարակում:

«Հատուկ պահպանվող տարածքներ. Հայաստան» ծրագրի շրջանակում «Հայանտառի» Կապանի անտառտնտեսությանը, Ջանգեզուրի կենսոլորտային համալիրի եւ ջրային ռեսուրսների կառավարման մարզային կենտրոնի համար ձեռք է բերվել նոր տարածք՝ Մինաս Պապյան 10ա հասցեում (այդտեղ նախկինում «Խուստուկ» հեռուստատեսություն էր): Նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելեց այդտեղ, ծանոթացավ երկհարկանի կառույցի շենքային պայմաններին: Այնուհետեւ «Ջանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում զրույց անցկացրեց կառույցի աշխատակիցների եւ մարզի բնապահպանության ոլորտի պատասխանատուների հետ, խոսվեց առկա խնդիրների ու դժվարությունների մասին, քննարկվեցին էկոտուրիզմի զարգացման հետ առնչվող խնդիրներ:

Աշխատանքային օրվա ավարտին է. Գրիգորյանը մարզպետարանի դահլիճում հանդիպեց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, բնապահպանների, ազդակիր բնակավայրերի բնակիչների հետ: Վերջիններս, մասնավորապես, բարձրաձայնեցին Արծվանիկի պղծամբարի հետ կապված բնապահպանական խնդիրներ:

Քաջարանի հանքավայրը շահագործող ընկերությունը փարիներ շարունակ անպատիժ խախտել է ՀՀ օրենքները

ՀՀ բնապահպանության նախարարությունը 2016 թվականի դեկտեմբերի 16-ին դրական եզրակացություն է տվել «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (հետագայում ՋՊՄԿ) կողմից շահագործվող Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություններին: Հաստատված փոփոխությունների էկոլոգիական բացասական հետեւանքներն ակնհայտ են: Սակայն այսօր ուզում ենք ձեր ուշադրությունը բեւեռել մի այլ դրվագի վրա, որը լիովին բացահայտում է այս ոլորտում պետական լիազոր մարմինների տրված եզրակացությունների եւ թույլտվությունների ձեւական բնույթն ու վերահսկողության իսպառ բացակայությունը:

Նախարարության կողմից տրված այս դրական եզրակացության համաձայն Քաջարանի հանքավայրից տարեկան կոնյուկտուրային արդյունահանել մինչև 22 միլիոն տոննա հանքաքար՝ մինչև այժմ թույլատրված 12,5 միլիոնի փոխարեն: Տարեկան մինչև 12,5 միլիոն տոննա հանքաքար արդյունահանելու իրավունքն ու փորձաքննական դրական եզրակացությունը ՋՊՄԿ-ին տրվել էր դեռ 2007 թվականին, ինչը վերջին 10 տարվա ընթացքում ոչ մի փոփոխության չի ենթարկվել: Իսկ դա էլ իր հերթին նշանակում է, որ հանքը շահագործող ընկերությունն իրավունք չունի արդյունահանել պետական լիազոր մարմինների կողմից թույլատրված ծավալներից ավելի հանքաքար:



Միեր Պոլոսկով, «Ջանգեզուր ՊՄԿ» ՓԲԸ վրտեն

Նարեկ Ղահրամանյան. «Նախընտրում եմ կենդանի, անմիջական շփումները մարդկանց հետ»

Չրույց Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանի հետ

-Մեր գրույցը սկսեմք հույժ ավանդական, բայց անհրաժեշտ հարցից. ի՞նչ ժառանգություն ստացաք, երբ սկսեցիք պաշտոնավարել: Կապանը մեր մարզի ամենախոշոր բնակավայրն է՝ բազմաթիվ ենթակառուցվածքներով, նաև հիմնախնդիրներով...

-Այդ հարցն առաջին անգամ չի տրվում, միշտ էլ նույն պատասխանն են տվել, որ հիմնախնդիրներով լի մի քաղաք են ժառանգություն ստացել, ես հիմնախնդիրների ամբողջ ծավալը չգիտեի, պատկերացումն էի, բայց մանրամասն ժամոթ չէի, օրինակ, Շինարարների կամ Բաղաբերդ քաղաքացիների, կամ ասենք խղճանց բնակավայրի խնդիրներին: Դրսից եկած մարդիկ, մասնավորապես երեւանի իմ ընկերները, Կապանի մասին ասում են բավականին սիրուն քաղաք է, երեւի փոփոխական հարկերով չենքերը տեսնելով: Բայց իրականությունն այլ է:

-Եվ հատկապես ի՞նչն է Ձեզ զարմացրել կամ, համեմայնողապես, արտառոց թվացել:

-Ամբարեկարգ մայրերը, փողոցները, տանիքները, թեպետ վերջիններս համատիրությունների ենթակառուցվածքի տակ են: Մարդկանց հոգեբանությունը, որ ամենախնդիրահարույցն է: Երբ պաշտոնյան փոխվում է, քաղաքացին չի փոխվում, փոփոխությունը դառնում է ձեռնարկ՝ թղթի վրա գրված: Ինձ ամենաշատը դա է հիասթափեցրել այս երկու ամսվա ընթացքում: Ես քաղաքացիների ընդունելությունն են ունենում եւ չեն նկատել մի մարդու, որ կառուցողական մի առաջարկ անի:

-Մի հարց ծնունդ, այդ ամենը, որ ասում եք, տեղական ինքնակառավարման մարմինը կարող էր իր լիազորությունների, իր հնարավորությունների սահմաններում կատարել, թե՞ հնարավոր չէր:

-Հնարավոր էր, ինչպես՝ կարող է՝ հնարավոր չլիներ: Մեր անկախությունը 27 տարեկան է, կայացած պետու-

-Չէի ասի, թե շատ հանկարծակի էր, բայց այնպես էլ չէր, որ սպասելի էր:

-Եւ ի՞նչ եք կարծում՝ ստացվում է:

-Ստացվելն այսպես կմեկնաբանեմ՝ յուրաքանչյուր գործ կարելի է անել. ցանկություն է պետք եւ եռանդ: Իսկ թե իմ դեպքում ինչպե՞ս է ստացվել, համայնքապետարանի աշխատակազմն ու բնակիչները կասեն:

-Դուք տեսնո՞ւմ եք, որ Ձեր ուսերին դրվածը կարող եք հաղթահարել:

-Միանշանակ:

-Մի խնդրի մասին եւս կուզեիք Ձեր կարծիքն իմանալ. օրեր առաջ խմբագրության ստեղծագործական խումբը Շիկահողում էր. մի գյուղաբնակի կարծիքով՝ համայնքների խոշորացումն ավելի շուտ գյուղերը քայքայելու նպատակ ունի: Ի դեպ, այդպես էլ վերնագրել ենք հոդվածը: Ընդհանրապես ինչպե՞ս եք վերաբերում համայնքների խոշորացմանը:

-Շատ վատ: Միշտ դեմ եմ եղել համայնքների խոշորացմանը: Իմ պատկերացմամբ՝ դա նախորդ կառավարության կողմից գյուղական խնդիրներից խուսափելու մի ձև է: Ասենք միջհամայնքային ճանապարհները պիտի սպասարկեն մարզպետարանը, կառավարությունը: Դա մինչևեւ համայնքների խոշորացումը, իսկ հիմա Կապանի մի բնակավայրից մյուսն ընկած ճանապարհը պիտի սպասարկի համայնքը, ինչի համար ֆինանսական հնարավորություն չունի: Խոշորացման հետեւանքով որոշ չափով գյուղերը դատարկվել են. գյուղապետարաններն աշխատակազմ ունենին՝ 7-8 մարդուց բաղկացած, համայնքային բյուջե կար, թեւ սուղ: Ի՞նչ եղավ խոշորացումից հետո. գյուղում աշխատատեղեր կրճատվեցին, դա շատ ցավալի է,



թյուն ունենք, եւ ռազմավարական նշանակություն ունեցող մարզի կենտրոնն այս վիճակում է: Հասկանալի է, որ Հոլիվուդ կամ Գլենդել չենք ժառանգել, բայց քաղաքն այս վիճակում չպիտի լինի, 27 տարվա ընթացքում այս խնդիրների կեսը պիտի լուծված լինի, եթե ոչ 75 տոկոսը:

-Եւ, այնուամենայնիվ, ո՞րն եք համարում գլխավոր խնդիրը, որ ծառայած է Կապան համայնքի առջև՝ Ձեր նախնական դիտարկումներով:

-Գլխավոր խնդիրը կապանցու մտածելակերպն է, աշխարհայացքը, իր քաղաքի հանդեպ ունեցած վերաբերմունքը՝ եվ անտարբեր, եվ պասիվ: Հին ժամանակների կարծրատիպերը չեն հաղթահարվում: Այդ ամենը վերելից է ժառանգված քաղաքացուն, բայց իրավիճակներ կան, երբ քաղաքացին ցանկության դեպքում կարող է չնայել ո՛չ քաղաքային, ո՛չ մարզային իշխանություններին, այլ գործել իր սրտի եւ խղճի մտքը, պարզապես կարող է սիրել իր քաղաքը, ձգտել մի լավ բան անել՝ իր անձնական ամբիցիաները մի կողմ դրած: Եւ վերը նշված խնդիրներից մի քանիսը մեխանիկորեն կլուծվեն:

-Շատ հանկարծակիորե՞ն Ձեզ առաջարկեցին գլխավորել Կապան համայնքը...

Բնապահպանության նախարարը Սյունիքում



Էջ 1 Սեպտեմբերի 15-ին նշվում է համաշխարհային մաքրության օրը: «Մաքուր մոլորակ» միջոցառման շրջանակում բնապահպանության նախարարության պատվիրակությունը Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը, Կապանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանը, Կապանի N 6 հիմնական դպրոցի աշակերտներն այցելեցին Շիկահող: Ճանապարհին սանամաքման աշխատանքներ կատարեցին՝ պլաս-

տիկ եւ կենցաղային աղբից մաքրելով աղբյուրի տարածքը (տեղացիները Կոնասի աղբյուր են ասում): Այնուհետեւ նախարարը եւ մարզպետը Շիկահողի գյուղամիջում հանդիպեցին իրենց սպասող բնակիչներին (նրանց բարձրացրած հարցերը վերաբերում էին վառելիքայտի): Հետո այցելեցին Շիկահողի պետարգելոցի վարչական շենք, որտեղ ծանոթացան զբոսաշրջիկների համար ստեղծված պայմաններին, եղան գյուղի սուրբ Ստեփանոս նախավկա եկեղեցուն: **Վահրամ Օրբեյան**

Ստուգումներ են սկսվել Զանգեզուրի պղնձամուլիք-դենային կոմբինատում



փաստի առթիվ հարուցված վարչական վարույթը:

Տեսչական մարմնի ղեկավարի խոսքով՝ վարույթը գործունեության այնպիսի տեսակ է, որը լիարժեք ուսումնասիրություն չի ենթարկում տնտեսվարողի կամ սուբյեկտի գործունեությունը, այն ավելի շատ մակերեսային գործառնություն է ենթադրում, ինչպես օրինակ, զննությունը, ցուցանմուշ վերցնելը: Եվ եթե վարչական վարույթի շրջանակներում հնարավոր խնդիրները պարզելու անհրաժեշտություն է առաջանում, համապարփակ ուսումնասիրություն կատարելու համար առաջարկություն է արվում ստուգում իրականացնել, դա կարող է լինել հեկ, հանքարդյունաբերող ընկերություն եւ այլն: Ահա եւ աղտոտված պարզվածքի վարույթի դեպքում տեսչական մարմնին առաջարկվել է ստուգում իրականացնել:

Սեպտեմբերի 10-ից ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ստուգումներ է սկսել Զանգեզուրի պղնձամուլիք-դենային կոմբինատում: Ստուգումները տեւելու են 15 աշխատանքային օր, սակայն, եթե անհրաժեշտություն լինի, ժամկետը գուցե երկարացվի: Այս մասին մեզ փոխանցել է տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանը: Ստուգումներն ընդգրկելու են եւ ընդերքին, եւ՝ բնապահպանությանն առնչվող հարցեր:

Ա. Գրիգորյանը նաև տեղեկացրել է, որ ստուգումների մեջ ներառվելու է ՁՄՍԿ-ի աղտոտված պարզվածքն Արծվանիկի պոչամբարից Նորաշենիկ գետ թափվելու

Հիշեցնենք, որ մայիսին կառավարության նիստին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանձնարարական էր տվել ստուգումներ սկսել 28 մետաղական հանքարդյունաբերող ընկերություններում: Տեսչական մարմնին առաջին ստուգումն իրականացրել էր Ամուլսարի հանքավայրում:

Լուսանկարը՝ miningmetal.am-ի hetq.am 2018-09-13

Կորել է

Կապանի բժշկական ուսումնարանի 1980-1981 ուստարվա շրջանավարտ Վերա Միխայելի Հայրապետյանի 005571 դիպլոմը: Համարել անվավեր:

Արծվանիկում ներդրում անողներին պոչամբարը վախեցնում է

«Ավագանին թող որոշի՝ հարցը հանձնի, միստը սկսի»։ այսպիսի պահանջ էր դրվել Կապանի համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար Նարեկ Դահրամանյանի եւ ավագանու անդամների առջեւ։

Խոշորացված Կապան համայնքի մեջ ընդգրկված Արծվանիկ, Սեւաքար, Չափնի գյուղի բնակիչները փակել էին համայնքապետարանի դահլիճի մուտքը, որտեղ պետք է տեղի ունենար ավագանու նիստը։ Նրանց դժգոհության պատճառը նիստի օրակարգում ընդգրկված մի քանի հարցեր էին, որոնք վերաբերում էին Արծվանիկի, Սեւաքարի եւ Չափնի մի շարք հողամասերի կատեգորիան փոխելու նպատակով այդ գյուղերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխություններին հավանություն տալուն, ինչպես նաեւ Արծվանիկի Նոր ջուր թաղամասում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների 51 հա հողերին (բաժանված 3 հասցեի մեջ), որոնք առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով նախատեսվում է տրամադրել Չանգեզուրի պղնձ-մոլիբդենային կոմբինատին։

Բողոքող քաղաքացիներից Սիեր Ստեփանյանը 215 արծվանիկցիների ստորագրություններով դիմում էր բերել համայնքապետարան։ Պահանջը վերոնշյալ հարցերն ավագանու նիստի օրակարգից հանելն էր։ Ստեփանյանը բողոքի ակցիայի ժամանակ առաջարկել է ստուգել պոչամբարի թունավոր նյութերի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա։

Արծվանիկի վարչական ներկայացուցիչ Արշավիր Գարոբյանյանը մեզ հետ հեռախոսազրույցում նշեց, որ երկու-երեք անգամ ժողով են արել գյուղում։ Ըստ նրա՝ արծվանիկցիները ոչ թե պահանջում են փակել ՋՊՄԿ-ն, այլ ընդամենն ուզում են, որ պոչամբարի ընդլայնման համար իրենց գյուղից այլեւս հող չհատկացվի։

«Ինձ մտնենում են, ասում, որ հիմա ուզում ենք գյուղում տուն սարքենք՝ սարքենք, թե՞ չսարքենք, կամ դրսից գյուղի երիտասարդներից եկել են, մեծ մասը Ռուսաստանում են, ուզում են գյուղում ներդրումներ անեն, գործեր անեն, որ գյուղը մի քիչ, ես պես ասած, գա իր տեղը, ինչպես եղել է մի 20-25 տարի առաջ։ Հիմա էլ մարդիկ կասկածում են», - ասում է Արծվանիկի վարչական ներկայացուցիչը։ Նրա փոխանցմամբ՝ ներդրում անողները թուր տեղեկություն են ունենում, գիտեն, թե ամբողջ գյուղը պոչամբարի տակ է անցնելու։

Արշավիր Գարոբյանյանն ասում է, որ Արծվանիկից երեք անգամ հող է հատկացվել ՋՊՄԿ-ի պոչամբարի



համար։ Առաջինը եղել է 1973-ին՝ 273 հա, երկրորդ դեպքը՝ 2006-ին՝ 102 հա, իսկ երրորդը՝ 2015-ին՝ Ինչպես արդեն գրել ենք, 2015-ին կառավարությունը գերակա հանրային շահի անվան տակ որոշել է պոչամբարի ընդլայնման համար 492 հա հող վերցնել Կապանի Արծվանիկ, Չափնի, Աճանան, Սեւաքար եւ Սյունիք գյուղերից։ 492 հա-ից 275-ը հենց Արծվանիկի հողերն են։ Ա. Գարոբյանյանն ասում է, որ իրենք չեն կարող դրա «դեմն անել», քանի որ կառավարության որոշում կա։

«Մեր ժողովուրդն ուզում է իմանա, թե սրանից ինտո իր ճակատագիրն ինչ է լինելու, էս գյուղում ապրե՞ն, թե՞ չապրեն։

Ե՞րբ է լինելու վերջը», - հարցնում է Արծվանիկի ներկայացուցիչը։

Ասում է՝ 1973 թ.-ից մինչեւ հիմա պոչամբարն իրենց գյուղում է, հիմա էլ թող տանեն մեկ այլ վայր։ Գյուղը պոչամբարի պատճառով դատարկվում է, բնակիչների մի մասն արդեն գնացել է ազատագրված տարածքներում բնակություն հաստատել։ «Մի երկու մարդ ենք մնացել գյուղում, հիմա էլ էլ վերանա՞, դե եթե գյուղը վերանում ա, միանգամից ասեք, որ վերանում ա, էլ ի՞նչ անենք։ Ժողովրդի խնդիրը դա է, որ մեկը մի փաստաթուղթ ներկայացնի մեր համայնքին, ասի՝ ձեր վերցրած հողերից մի մետր առաջ չենք գնալու, հիմա էլ մարդիկ ու-

զում են մի բան անեն (նկատի ունի ներդրողներին- հեղ.)»։

ՋՊՄԿ-ն տարեկան 22 միլիոն տոննա արտադրողականություն ունի, ինչից գոյացած պոչամբարը թափվում են Արծվանիկի պոչամբար։

Տեղացիների երկրորդ դժգոհությունը հանքարդյունաբերող ընկերությունից սոցիալական եւ առողջապահական հարցերն են։

«Հիմա մարդն ասում է՝ ուզում են տուն սարքեն, բայց սարքեն ինչի՞ համար, եթե էստեղ չեն կարողանալու ապրել», - նշում է Արշավիր Գարոբյանյանը՝ ավելացնելով, որ ժողովրդի պահանջն է փակել պոչամբարը կամ տեղափոխել մեկ այլ տեղ։

Վարչական ներկայացուցիչը մի քանի անգամ շեշտում է. «Չենք պայքարում կոմբինատի դեմ, չենք ուզում, որ կոմբինատը փակվի, քանի որ 5 հազար հոգի առանց հացի կմնա»։

Հիշեցնենք, որ ՋՊՄԿ-ին առնչվող վերը նշված հարցերն ընդգրկվել էին նաեւ օգոստոսի 21-ին կայացած ավագանու արտահերթ նիստում, սակայն դրանք քննարկումը հետաձգվել էր։ Փաստորեն, բնակիչների բողոքի արդյունքում դրանք լուծումը կրկին առկախվեց։


hetq.am
2018-09-15

Քաջարանի հանքավայրը շահագործող ընկերությունը փարիներ շարունակ անպատիժ խախտել է ԶՅ օրենքները

էջ 1 Սակայն Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲԾ) քաղաքացիական նախաձեռնությունը պետական մարմիններին ուղղված հարցումների արդյունքում ստացված տեղեկություններից պարզել է, որ ՋՊՄԿ-ն դեռ 2010 թվականից սկսել է ապօրինաբար ավելացնել իր արդյունահանման ծավալները, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում դրանք հասցրել է արդեն տարեկան մինչեւ 17-19 միլիոն տոննայի։

Ստացվում է, որ վերջին յոթ տարիների ընթացքում ՋՊՄԿ-ն թույլատրվածից 29,7 միլիոն տոննա ավել հանքաքար է արդյունահանել ու վերամշակել, ինչի արդյունքում նույն չափով լրացուցիչ հանքահարստացման թափոններ են տեղադրվել Արծվանիկի պոչամբարում՝ մեծացնելով տարբեր ճանապարհներով բնական միջավայրի աղտոտման ծավալները։ Բնականաբար համապատասխան չափով մեծացել են նաեւ դատարկ ապարների լցակույտերի, ֆլուտացիայի ժամանակ կիրառվող տարբեր քիմիական ռեագենտների, մթնոլորտային օդի եւ ջրերի մեջ տարաբնույթ արտանետումների ծավալները։

Այս ամենը մինչեւ 2014 թվականի օգոստոսի 9-ը գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ԶՅ օրենքի բացահայտ եւ կոպիտ խախտում է։ Այդ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետում հստակ գրված է հետեւյալը. «Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում լիազորված մարմինը պարտավոր է մասամբ կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչեւ փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը»։ Չի գործել նաեւ դրանից հետո ուժի մեջ մտած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ԶՅ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետի հետեւյալ պահանջը.



«Փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ծանաչվում, եթե գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի եւ փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով»։

Բացի այդ ՋՊՄԿ-ն խախտել է նաեւ 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ԶՅ «Ընդերքի մասին օրենսգրքի» 59-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի հետեւյալ պահանջը. «Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է աշխատանքներ իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի եւ նախագծի պայմաններին համապատասխան»։

Այս խախտումներն այնքան բացահայտ են եղել, որ ԶՅ բնապահպանության եւ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարություններն ուղղակի չէին կարող դրանք չտեսնել։ Իսկ այսպիսի պարզ խախտումը տեսնելն ու ընդհանրապես ոչ մի քայլ չձեռնարկելը նշանակում է, որ անիմաստ է խոսել ավելի լուրջ վտանգների ու խախտումների մասին, որոնք կատարվում են Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության ոլորտում։ Ամբողջովին անիմաստ է դառնում պետական բնապահպանական փորձաքննության ողջ գործընթացը։ Հերիք չէ, որ գրեթե չի իրականացվում էկոլոգիական եւ առողջապահական վտանգների մասնագիտական գնահատում, մի բան էլ հետազայում

չեն վերահսկվում նույնիսկ տնտեսվարողին տրված դրական եզրակացության մեջ նշված պարզագույն պայմանները։ Եվ, ի վերջո, ի՞նչ մոր մետաղական հանքավայրերի շահագործման թույլտվություններ տալու մասին կարող է լինել խոսքը նման անհեթեթ կառավարման պայմաններում։

Ամեն դեպքում ցանկալի կլիներ լսել պետական լիազոր մարմինների պարզաբանումները, ինչպես նաեւ Քաջարանի հանքավայրը շահագործող ՋՊՄԿ-ի եւ նրա 60 տոկոսի բաժնետեր գերմանական «Քրոնիմետ մայնինգ» (CRONIMET Mining) ընկերության ղեկավարության կարծիքը։ Բնական հարց է առաջանում, թե արդյո՞ք գերմանական ընկերությունն իրեն թույլ կտար նույն կերպ վարվել օրենքների եւ բնության հետ Գերմանիայում, ինչպես դա անում է Հայաստանում։

Հ. Գ. Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ ահագնազեր են եղել այն մասին, որ ՋՊՄԿ-ն խախտում է ընդերքօգտագործման պայմանագրով ու փորձաքննական եզրակացությամբ սահմանված պայմանները։ Դեռ 2014 թվականին ՀԲԾ-ն պաշտոնական հարցում էր ուղարկել ԶՅ բնապահպանության նախարարությանը, որտեղ ի թիվս այլ խնդիրների ահագնազեր էր նաեւ Քաջարանի հանքավայրից թույլատրված ծավալից ավել հանքաքար արդյունահանելու փաստերի մասին։ Սակայն նախարարությունն այն ժամանակ օրենքի պահանջները կիրառելու փոխարեն ընդամենը մեզ պատասխանեց, թե ՋՊՄԿ-ն ավելացված՝ տարեկան 22մլն. տ. հանքաքարի արդյունահանման համար մշակում է համապատասխան փաստաթղթերի փաթեթ, ինչը կներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության։ Բազմաթիվ ահագնազեր են եղել նաեւ բնական միջավայրն աղտոտելու վերաբերյալ։

Հայկական բնապահպանական ճակատ (ՀԲԾ) քաղաքացիական նախաձեռնություն

Լուսավորությունը եւ կրթությունը Ղափանի գյուղերում 20-րդ դարասկզբին



Քրիստինե Պետրոսյան
Կապանի երկրագիտական թանգարանի գիտաշխատող

Ով էս աշխարհում որդու լավությունը կուզե, թող տա նրան շնորհ եւ կրթություն
Խ.Արվյան

Նախ այն մասին, թե ինչ է լուսավորությունը, որտեղ սկիզբ առավ լուսավորական շարժումը, ովքեր են նրանց կնքահայրերը:

Ժամանակակից աշխարհի մշակութային ստեղծագործական ձեւերն առավելապես պարտական են եվրոպական լուսավորական շարժմանը: Այդ շարժումը հեղաշրջեց մարդկային մտածողությունը՝ ճանաչողության նախադրյալները փնտրելով ոչ թե եկեղեցու եւ կրոնի, այլ գիտության եւ բանականության մեջ: Ոգեւորված գիտության հաջողություններով՝ այն ձեւակերպեց քննադատական մտածողությունը, որը ոչ միայն պետք է աշակերտ գիտության, արվեստների կամ իրավունքի զարգացմանը, այլև ծառայեր սոցիալական կյանքի առաջընթացին: Լուսավորականությունը սոցիալական, գաղափարական շարժում է, որը պայքարում էր ֆեոդալիզմի, կաթոլիկական եկեղեցու դեմ, բարձրացնում գիտության եւ գիտելիքի դերը հասարակության մեջ: Այն սկիզբ է առել **տասնյոթերորդ** դարում՝ հիմք դնելով բանականության հաղթարշավին, բարձրացնելով հասարակության մեջ անհատի դերը: Լուսավորականությունը տերմինն օգտագործել են լուսավորիչներ Մարի Ֆրանսուա Վոլտերը, Յոհան Չերդերը, բայց վերջնականապես ընդունվել է փիլիսոփա Իմանուիլ Կանտի «Պատասխան հարցին» (1784թ.) հոդվածից հետո: 19-րդ դարի պատմաբաններն ու փիլիսոփաները լուսավորականությունը բնութագրել են որպես մարդկային բանականության նկատմամբ անսահման հավատի, միջնադարյան եկեղեցական խավարանտության դեմ գիտության հաղթանակի դարաշրջան: Լուսավորական շարժումն իրականում ապագա հեղափոխությունների գաղափարական նախապատրաստությունն էր:

րակ», Մադրաս, 1772թ.), Միքայել Նալբանդյանը, Խաչատուր Աբովյանը, լուսավորական գործունեություն էին ծավալում Սիսիբարյան միաբանությունը եւ ուրիշներ:

Իսկ ընդհանրապես, Հայոց դպրոցի բուն պատմությունը սկսվել է հայոց գրերի ստեղծումով (405), որից անմիջապես հետո Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթևի աջակցությամբ ձեռնամուխ է եղել կրթատների բացմանը: Առաջին դպրոցը (վարդապետարան) բացել է Վաղարշապատում (գոյատևել է մինչև 510թ.), այնուհետև դպրոցներ է հիմնել Հայաստանի այլ վայրերում, այդ թվում՝ Արցախում, առաջինը՝ Ամարասուն: Մեսրոպյան դպրոցներում դասավանդվել են հայոց լեզու, երգ, երաժշտություն, գրչության արվեստ եւ այլն: Խոշոր դպրոցները միաժամանակ եղել են գրչության կենտրոններ, ունեցել ձեռագրատներ: Գործել են նաև որոշակի թեթևամով (գրիչների, թարգմանիչների) դպրոցներ:

Դպրոցում նախապես դասավանդվել են Սուրբ Գիրքը, վարքաբանություն եւ եռյակ գիտությունները (քերականություն, ծարտասանություն, դիալեկտիկա), ապա նաև աստղաբաշխություն, բարոյագիտություն, թվաբանություն եւ այլն: Ավելի ուշ Դավիթ Անհաղթը (5-րդ դարում) առաջարկել է քառյակ գիտությունների (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն եւ երաժշտություն) ուսուցում բարձր տիպի դպրոցներում: Այն իրականացրել է Անանիա Շիրակացին (7-րդ դարում)՝ ստեղծելով հայ աշխարհիկ առաջին գիտական դասագիրքը՝ «Բննիկոնը» (ընդգրկված էին «Յոթ ազատ արվեստները»): 8-9-րդ դարերում վերելք են ապրել Սյունյաց դպրոցը, Գեղարքունիքի գավառի Մաքենյանց ուխտը եւ այլն:

Ի՞նչպես եվրոպայում սկիզբ առած լուսավորական շարժումը հասավ Հայաստանի ամեն մի անկյուն, ինչպես գյուղերում հիմնվեցին կրթօջախներ, ու՞մ ջանքերով եւ ի՞նչ միջոցներով:

1836թ. մարտին 11-ին ցարական կառավարության հռչակած «Հայ լուսավորական հավատի հոգեւոր գործերի կառավարման կանոնադրությունը» (Պրոմեթեոս) կանոնակարգում էր իշխանության հարաբերությունները հայերի եւ հայ եկեղեցու հետ՝ մասնակցելով հայ եկեղեցու եւ հայ համայնքի բոլոր ներքին գործերին: Նույն այդ օրենքի համաձայն՝ հայոց դպրոցները կարող էին գոյություն ունենալ միայն եկեղեցու

հովանավորության տակ (ծխական) եւ նրա վավերացրած դասացուցակով, որի հսկողությունն իրականացնում էր Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը: Այդ պատճառով էլ փակվեցին մի շարք հայկական դպրոցներ, մյուսներում էլ կրճատվեցին հայերենի դասաժամերը:

1885 թվականին ցարական իշխանությունը վարել է հայկական դպրոցները փակելու քաղաքականություն, որը լրջորեն սպառնացել է ազգային կրթության հետագա զարգացմանը: Մեկ տարի անց, սակայն, թույլատրվել է վերաբացել հայկական դպրոցները սահմանափակելով տարրական ուսուցմամբ: Հայկական դպրոցի համար այն գոյատևման պայքարի շրջան էր. հայկական բարեգործ ընկերություններն ընդլայնել են կրթությանը հատկացրած իրենց օգնությունը, նոր դպրոցներ են բացել, տրամադրել նյութական միջոցներ: 1890-ական թվականներին խստացվել են ցարական հետապնդումները, իսկ 1895-1896 թվականին հայկական դպրոցները կրկին փակվել են, առաջադեմ մտավորականներին կալանավորել են կամ աքսորել: Մի շարք կրթօջախներում այդ առիթով աշակերտական տեսական հուզումներ են բռնկվել:

Ցարիզմի գաղութային քաղաքականության արտահայտությունն էր 1903 թվականի հունիսի 12-ի հրամանագիրը: Երկուշաբթի Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի ստորագրով ստորագրեց հատուկ օրենք, որով պետությունը բռնազրավում էր հայկական հոգեւոր հարստություններին պատկանող ամբողջ շարժական եւ անշարժ գույքը: Դա առաջին հերթին հարվածում էր լուսավորական-կրթական հիմնարկներին եւ հայ դպրոցներին, որոնք պահվում էին եկեղեցական կալվածքների հասույթով:

Նիկոլայ Բ ցարի ներքին գործոց նախարար Պլեն, ով հայատյաց էր եւ հակահրեայի համբավ ուներ, ղեկավարեց հայահալած քաղաքականությունն Անդրկովկասում: Նա իր գործակից ու գաղափարակից Գոլիցինի հետ փակել տվեց 300 հայկական դպրոց Արեւելահայաստանում եւ 100 դպրոց Անդրկովկասում: Փակվեցին նաև մշակութային հաստատություններ, թերթեր, գրադարաններ, նույնիսկ բարեգործական միություններ: Կառավարությունը լրտեսական ցանց հաստատեց հայ եկեղեցիներում, իսկ փակված դպրոցների աշակերտներն այլ դպրոցներ ընդունվելու համար խոչընդոտների առջև կանգնեցին: Ցարական կառավարությունը երեք անգամ փակեց հայոց դպրոցները (1885, 1897, 1903թթ.):

Ցարական քաղաքականության նպատակն էր ձուլման ենթարկել հայերին: Հայապահպանության եւ եկեղեցու ունեցվածքը հետ վերադարձնելու խնդրում ակտիվ գործունեություն ծավալեցին Հնչակյան եւ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունները: Դաշնակցությունը անմիջապես կազմեց «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե», որը պաշտպան կանգնեց հայ ազգային հարստությանը: Հայ ժողովրդի պայքարը զարգացրաների դեմ, սակայն, պակասեց հաջողությամբ: 1905 թվականի օգոստոսի 1-ի հրամանագրով հայոց եկեղե-

ցուն վերադարձվեց նրա ունեցվածքը: Վերաբացվեցին դպրոցները: Հայ կրթական գործը զարգացման որոշակի հաջողություններ ու հզվարություններ ուներ Արեւելյան Հայաստանում: Բայց այն ժամանակվա կառավարությունը լավ էր հասկանում, որ պետության առաջընթացի համար հարկավոր էին գրագետ մարդիկ եւ ստիպված նպաստում էին կրթական գործի զարգացմանը: Արեւելահայության կրթական կյանքին ուղղություն տվողը Թիֆլիսն էր: Կազմակերպվեցին Բաքվի «Մարդասիրական», Թիֆլիսի «Հայոց հրատարակչական», «Կովկասի հայոց բարեգործական» ընկերությունները եւ այլ հասարակական կազմակերպություններ, որոնք նպաստեցին հայոց նոր դպրոցների բացմանը:

Դարասկզբին Ղափանի շրջանում շնորհիվ Բաքվի «Արամազդ եւ Բ. Հ. Կուլտուրական» ընկերությունների աջակցության, կրթական գործը բավական լավ հիմքերի վրա է դրվում:

Ժամանակի թերթերն անդրադարձել են Ղափանի եւ շրջակա գյուղերի տնտեսական, սոցիալական, հատկապես կրթական եւ մշակութային կյանքի անմիջապես վիճակին: Ղափանի տնտեսական եւ մշակութային կյանքն առաջընթաց չէր ապրում, գյուղերը խարխափում էին խավարի ու տգիտության մեջ:

Տարվա առատությունը նույնիսկ ոչ մի օգուտ չէր բերում Ղափանի գյուղացուն, քանի որ գյուղացին եզներ չուներ հողը վարելու համար, սերմ չուներ ցանելու: Հանքարդյունաբերությունը վարուց զարգացել էր, սակայն կրթության եւ լուսավորության տարածմանը որևէ նպաստ չէր բերում: Հանքերին մոտ գտնվող գյուղերը համեմատաբար տնտեսապես ավելի լավ վիճակում էին, որովհետև գյուղացիները բանվորությամբ կարող էին հայթայթել իրենց օրվա հացը, իսկ հանքերից հեռու գտնվող գյուղերի բնակիչները զրկված էին այդ հնարավորությունից:

Եթե Սյունիքը 12-րդ դարում կերակրում էր 600 հայկական գյուղերի, ապա 20-րդ դարի սկզբին նույնիսկ 90 գյուղ պահելու հնարավորություն չուներ: Բերրի հողերը 20-րդ դարի սկզբին խլեցին թուրք-թաթարները՝ հայերին քշելով լեռներ, որոնք եւ ղժվարանում էին պահել արագ աճող ազգաբնակչությանը: Չկար մի տուն, որ առնվազն մեկ մարդ մեկնած չլիներ պանդխտության: Սա ցավալի իրողություն էր, երբ շատերն իրենց երկրում չկարողանալով ուսում ստանալ, աշխատել, բռնում էին պանդխտության ճանապարհը: Ոմանք այլևս, ի դեպ, չէին վերադառնում հայրենիք:

Հայտնի լրագրող, բանահավաք, Գեորգյան ճեմարանի շրջանավարտ, նաև մեծ ուսուցիչ Սուլթան Տեր-Գեորգյանը (Արքայիկը) Ալիք թերթի համարներից մեկում նկարագրել է Ղափանի դրությունը եւ սրտի կակիծով հորդոր էր արել իր հայրենակիցներին, «Հայ երկրագործը ճակտի քրտիքով չենցրած դաշտը դուրս գալու յանդգնությունը չը պիտի ունենայ, թէ չէ, ակօսի մեջ, արօրի թով, ձեռք մաճին իր Կարապետներին, Ընդարներին, Բարիներին, Հաբիններին կը թողնէ ու ընկեր ամուլներին քրիւն կը տայ:

Հայ ծամբորդը տանը պիտի մնայ, թե չի ուզում իր Աստուա-

ծատուրներին, Գաբիններին, Սուխաններին դաւաճան սրին զոհ տալ: Հայ մանուկները իրենց մօր կրծքին աւելի պինդ պիտի փաւրեն, թէ չէ՝ անմեղ Բագրատիկների թւատակից կը թոցնեն դպրոցի ծամբին...»:

Նաև «Աշխատանք» թերթի հրատարակումներում ընկերոջը գրած նամակներից մեկում երեւում են Արքայիկի վախերը, մտահոգությունն ու անհագստությունը գյուղի դրության եւ մատաղ սերնդի կրթության ու լուսավորության նկատմամբ. «Գիւղը մի, միայն մի անձուէր գործչի կարօտեց, որ գրիչ առած դուրս գար նրա սրտի խօսքն ասելու, գիւղի ցաւեր բարձր, շատ բարձր պատմելու, առանց վախենալու անմիտ դատապարտութիւնից, առանց յետ կասելու, առանց մի անզգայ գեղջուկ լինելու. հնչեցնելու իր ծայրը՝ քանի շունչ ունի բերանումը, քանի դէռ չեն ծորել ամպտուղ անապատում ծաղիկներ ծլեցնող նրա երակների արիւնը. ասելիքն ասել ու ապտակել անխնայ, առանց մտնելու տգրուկ տանուտէրի լայն բուռը, լսելու դատաւորի ծայրին, պարելու ողորմելի աղախակալների յեղեղակ ծափով: Գիւղը իր ծնած հազարաւոր զաւակներից մի, միայն մի անձնագոհն ուզեց, որ ստորանալ չգիտենար, չիջնէր զարշառու ճահիճը ու մի ձեռն բախ, միւսում սերմ, ոտք կոխէր հայրենի ամայի անապատը, փորէր մացառներն արմատախիլ անէր ու զցած ազնիւ սերմերը քրտնջով բուսցնէր: Վերակենդանութեան կարօտ գիւղը զուր անվախճան տարիներ մի, միայն մի կարեկից ընկեր ուզեց, որ իր զոհողութիւններով, իր խիզախ կռիւներով առաջին տեղը բռնէր այն մարտիրոսների շարքերում, որ պիտի զան ու բժշկութիւն, նոր կեանք բերեն գիւղին...»:

Ու իմ այդ անյողողող հաւատը թւեր կաննի, երբ կտեսնեն մեր բոլոր մեծ ու փոքր գիւղերում մի մի ուսումնարան իր ուսուցիչներով, ժողովրդի ցաւերին նւիրած, նրա պահանջներից ծնած: Նրան սիրելի, հարազատ ուսումնարան. գիւղացու միջից ելած, նրա դարդերով էրած, նրա հառաչանքներով մեծացած ուսուցիչ...»:

Ժողովրդի սրտում ապրող ուսումնարանն ու անձնագոհ ուսուցիչը կստեղծեն մոգական մի գաւազան, որով տենչալի կերպարանափոխութիւն կստանան մեր թաքուն աշխարհներում հիւծուող գիւղերը»:

«Գավառ» թերթից տեղեկանում ենք, որ հանգուցյալ Սուլթան Տեր-Գեորգյանի ջանքերով Շիկահողում մի խումբ գյուղացիների մեջ մի քանի տարի առաջ գեղեցիկ միտք էր հղացել ինքնօգնության նպատակով հիմնել գյուղական շտեմարան: 1909թ. գյուղում էր Բ.Հ.Կ. միության գործակալ պ. Ա. Շահնազարյանը, որին գյուղացիները գրավոր համաձայնություն տվեցին այդ շտեմարանը դնելու Կ. Միության վերահսկողության ներքո: Նաև որոշվեց իշխանությունից ստանալ օրինական թույլտվություն: Այս գեղեցիկ նպատակին հասնելու համար գյուղի երիտասարդները



Պիմել էին նաև հայրենակից Մեսրոպ Եպիսկոպոսին, որ ուղղություն տա, թե ինչպես հիմնեն շտեմարանը:

Սրբազանը 1907թ. մի քանի օրով Բաբու էր գնացել: Անհուն ուրախություն է ապրում տեսնելով, որ իր հայրենակիցները զգալով ժամանակի հրամայական պահանջը, շտապում է օգնություն ցույց տալ իրենց ծննդավայրում ապրող՝ աշխատող ձեռքերից զուրկ եւ ծայրահեղ չքավորության մեջ ընկած թշվառներին: Մեսրոպ Եպիսկոպոսն այս հարցի շուրջ մի քանի անգամ ժողովներ է կայացնում: Սկզբում շտեմարանին անդամագրվեցին 72 հոգի՝ հավաքելով 2000ռ. ցորեն գնելու համար: Սակայն Բաբվից մեկնած սրբազանն անցնում է նոր պաշտոնի, իսկ շտեմարանի անդամների թիվն ինչ-ինչ պատճառներով հասավ 12 հոգու, ովքեր էլ չհուսահատվեցին, հաստատ հավատով եւ ոսկե հույսերով նայեցին դեպի ապագա՝ տեսնելու իրենց գործի օգտակարությունը ժողովրդի մեջ: « Շտեմարանը» գործեց՝ ունենալով 35-40 անդամ եւ 1000ռ. ամբարած ցորեն, որն այդ տարվա սեւ օրերին բաժին հանեցին չքավորներին:

Մինչեւ 19-րդ դարի վերջերը Ղափանի դպրոցների մասին քիչ բան է հայտնի: Այդ մասին տեղեկանում ենք հիմնականում այն ժամանակվա մամուլից: Եղած կրթօջախները մասավոր էին, եկեղեցուն կից եւ քիչ թվով պետական:

Ունենոր գյուղացին իր երեխային ուսման էր տալիս քաղաքում, չունեւորները դպրոց էին ուղարկում երեխաներին. դպրոցից, այսպիսով, օգտվում էր միջին դասակարգը: Եղած դպրոցներն էլ այնքան փոքր էին, որ ինքնուրույն չէին կարող իրենց գոյությունը պահպանել: Հասարակության մեջ կամաց-կամաց ձեւավորվում էր այն կարծիքը, որ դպրոցի գոյությունն արդարացված կլիներ միայն այն դեպքում, երբ այն նյութապես ու շենքով ապահովված լիներ: Իսկ անխափան գործունեություն հնարավոր էր բացառապես այն դեպքում, երբ հասարակությունը ֆինանսապես իր նպաստը բերեր դպրոցի զարգացմանը: Միայն այս դեպքում դպրոցը կլիներ հաստատուն, կապահովվեր կանոնավոր գործունեություն, որ գլխավորն էր, անմիջական հսկողություն կունենար դպրոցների զարգացման քաղաքականության վրա: Անշուշտ, այս պատասխանատու գործն իր վրա պետք է վերցնեւ հասարակության բանիմաց դասը: Գյուղական հասարակությունն իր սրբազան պարտքը պետք է համարեր կրթել իր փոքրիկ անդամներին՝ խթանելով հասարակության առաջընթացը: Լուսավորականության զարգացմանը ժողովրդի սեփականությունը դարձնելու համար պետք էր լուսավորություն տարածել ամենից առաջ դպրոցների միջոցով: Ղափանում այդ մարտահրավերներն էլ ընդունեցին հայ երիտասարդ մտավորականությունը եւ առաջադեմ հոգեւորականությունը: Նրանց մեծ մասը կրթություն էր ստացել ժամանակի լավագույն դպրոցներում՝ Թիֆլիսում, Շուշիում, Էջմիածնում եւ այլուր: Նրանք գալիս էին հայրենիք եւ կրթում մատաղ սերնդին՝ նրանց հիշողության մեջ վառ պահելով մեր հերոսներին եւ մեր պատմության փառավոր էջերը: Նրանք ջանք էին խնայում, տարբեր միջոցներ էին փնտրում, դիմում բարեգործական կազմակերպությունների, միայն թե լուսավորություն եւ կրթություն տարածվեր Ղափանում եւ շրջակա գյուղերում (Մովսես Գ Տաթևացի, արքեպիսկոպոս, Մեսրոպ Մազիստոս Տեր-Մովսիսյան եւ այլն)

Արտագաղթի առաջն առնելու եւ գյուղն անմխիթար վիճակից հանելու համար անհրաժեշտ էր նորամուծություն գյուղատնտեսության մեջ՝ զարկ տալ նոր մեթոդներով երկրագործությանը, կաթնառատությանը, մեղվաբուծությանը եւ այլն: Սրանք իրականություն դարձնելու համար անհրաժեշտ էր հենց սկզբում բացել, եթե ոչ միջնակարգ, զոնե ստորին գյուղատնտեսական դպրոց: Գյուղը խավարից ու տգիտությունից հանելու գործում մեծ փորձեր է արել Տաթևի առաջնորդ Ներսես-Մելիք Թանգյանը (Սյունիքի թեմի առաջնորդական փոխանորդ): 1903-ին ընդմիջեց էլ հայ եկեղեցու գույքի ու տիրույթների բռնագրավման վերաբերյալ ցարական կառավարության հրամանին: Ի դեպ, նա առաջիններից էր, որ գիտական խոր մեկնաբանություններով հանդերձ մանրագնին քննել է

«Պլոտնեմի»-ն եւ Ազգային սահմանադրությունը: Հայրենակներ գործունեության համար խրիմյան Հայրիկը նրան պարգևատրել է լանջախաչով: 1905թ. ցարական կառավարության հրահրած հայ-թաթարական արյունալի ընդհարումների ժամանակ Մելիք-Թանգյանը Սեբաստացի Մուրադի հետ կազմակերպել է Կապանի 50 հայկական գյուղերի պաշտպանությունը: Երբ Գորիսի հաշտարար միջնորդի խնդրանքով Շրվենանց գյուղում մեծահարուստ Գ. Տեր-Մարգարյանը դպրոցական շենք էր կառուցում՝ ծախսելով 30-40 հազար ռուբլի, օժանդակում արարողությանը հրավիրել էր Տաթևի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանին: Վերջինս խորհուրդ էր տվել ծխական դպրոցի համար այդքան գումար ծախսելու փոխարեն, 3-4 հազար ռուբլով կառուցել գյուղատնտեսական ստորին կարգի դպրոց՝ ընդգրկված բոլոր շյուղերով, որն ավելի մեծ օգուտ կտար բնակչությանը:

Ներսես Մելիք Թանգյանը «Գավառ» թերթի մի թղթակցության մեջ գանգեզուրցիներից հայտնել էր, որ Ղրիմի Մելիտոպոլ քաղաքացի պ. Գևորգ Կարա-Մուրզան կտակել էր 20,000 ռուբլի՝ Ձանգեզուրում գյուղատնտեսական դպրոց բացելու համար: Կտակարարներն են պ. Համբարձումյան, Ս Մելիքյան, Ալեքսանդր Մելիք-Ազարյան, երդ. Հավ. Հովհաննես Ապենդարյան, Առաքել Բաբախանյան (Լեռ) եւ Ներսես Մելիք-Թանգյան:

Քանի որ գումարը բավականություն էր տալիս պահելու ընդարձակ գյուղատնտեսական դպրոց՝ Մելիք Թանգյանը միաժամանակ կոչ էր արել գանգեզուրցիներին, հարուստ թե աղքատ, հետևել բարերարների օրինակին եւ, ըստ կարողության, օգնության հասնել դպրոցին՝ ցանկանալով այնքան, որքան սրտից կբխեր: Ներսես Մելիք-Թանգյանը մեծ ջանքեր էր գործադրել գյուղը փրկելու խավարից ու տգիտությունից, իսկ Ձանգեզուրում շատ հարուստներ ու ապահովներ կային, որ կարեւ-

ցի եւ ջրի մնան առօրյա պահանջ էր դարձել ղափանցիների համար: Սակայն կային նաև գյուղեր, որ այս ուղղությամբ մատը մատին չէին տալիս, իսկ շրջանի կիրթ եւ առաջնորդ տարրերն ընդհանրապես մտահոգություն եւ անհանգստություն չէին ցուցաբերում:

Բեխ գյուղի անցյալի ու ներկայի մասին չափազանց հետաքրքիր ու տխուր տեղեկություններ ենք հանդիպում Ստեփան Մելիք Փարսադանյանի հրապարակումներում: Բեխը գտնվում է պատմական Հալիծորի բերդի արևելյան մասում, Չավնդուր գետի աջ ափին: Այս գյուղի անցյալում կային շատ մխիթարական երեւույթներ. Եթե հիշելու լինեցե՞ր Դավիթ բեկին օգնություն ձեռք մեկնող Մ. Փարսադանյանի եւ նրա փեսա Ավետիքի փայլուն գործունեությունը: Սակայն լրագիրը շեշտում էր, որ իրենց նպատակը գյուղի անցյալ փառքն ու գովքն անելը չէ, այլ փրկել կորցրածը: Ժամանակն արել էր իր գործը վճարելով գյուղի վարկը: Շրջանի առաջնակարգ գյուղերից մեկն էր համարվում Բեխը՝ թե տնտեսական-նյութական ապահովության եւ թե լուսավորության առումով: Ապահովության ամենազլխավոր հիմնաքարն է եղել Հալիծորի հանքը: Այդ հանքը, սակայն, կռվախնձոր էր դարձել բեկերի միջև: Այստեղ տիրում էր անհամերաշխ մթնոլորտ: Բեկերը կռվում էին հողի համար: Ամենուր տիրում էր անմիաբանություն եւ անհամերաշխություն: Իսկ հանքը նման մթնոլորտում չէր կարող բարգավաճել: Այս ամենի արդյունքն այն եղավ, որ գյուղից շատերը բռնեցին պանդխտության ճանապարհը, որովհետեւ հնարավորություն չուներ ուսում ստանալ իրենց գյուղում եւ չէին կարողանում առօրյա հացի համար գումար վաստակել: Նյութական տղություն պատճառով բեխցիներն ընդհատել էին իրենց ուսումը, խնդրում էին բարերարներին օգնության հասնել, սակայն, անօգուտ, նրանցից միայն մերժում էին ստանում:



Շրվենանցի դպրոցի ուսուցչական եւ աշակարհական կուլեկտիվը, 1911թ.

ություն չէին տալիս դպրոցների բացմանը: «Գավառ» թերթից տեղեկանում ենք, որ 1907 թվականից Ղափանում գոյություն ունեին մի շարք ծխական դպրոցներ, որոնք բացվել էին Բաբվի «Արամազդ եւ Կուլտուրական» ընկերության նախաձեռնությամբ ու նպաստներով: Ի դեպ, հայերն իրենց կրթական բարձր մակարդակով, առեւտրականն նախաձեռնություններով, նավթային ընկերությունների մեջ գրաված բարձր պաշտոններով սկսել էին սոցիալական, տնտեսական ու վարչական բարձր դիրքերի հասնել Բաբվում: Ընկերությունն աջքի առաջ էր ունեցել ղափանցիների՝ աշխարհի անցուղարձից անտեղյակությունը եւ ցանկացել էր ղափանցիներին փրկել տգիտության ճիրաններից՝ տարածելով կրթություն ու լուսավորություն: Ղափանում, այս առումով, այդ ժամանակաշրջանում, կարելի է ասել, պատմական իրադարձություններ էին տեղի ունենում: Կրթությանը նպաստելու նպատակով գործող ընկերությունները լավ էին հասկացել ժամանակի պահանջը՝ լուսավորության նշանակությունը: Շրջանի ամեն կողմում եռում էր դպրոցաշինությունը, որն ուսման ընթացքի համար ամենաէական ու առաջին գլխավոր քայլն էր: Կրթությունը հա-

րազիրը շարունակում է եւ իր մտահոգությունը հայտնում, որ եթե չլինեին վերը նշված արատավոր երեւույթները եւ եթե Հալիծորի հանքի աշխատանքը կանոնավոր ռելսերի վրա դրվեր, կլուծվեին բազմաթիվ հրատապ խնդիրներ: Հանքի անխափան աշխատանքի ապահովումը Բեխ գյուղում առաջնակարգ խնդիր էր, որից կախված էր կրթական գործի զարգացումը:

Նախկին առաջադեմ գյուղն ամենահետադիմականն էր դարձել: Հարուստներն իրենց զավակներին քաղաքներում ուսման տալով, տարրական դպրոց պահելու մասին չէին մտածում, իսկ չունեւորները չէին կարողանում կրթվել: Շրջանի բոլոր գյուղերում արդեն դպրոցական շենքեր էին կառուցվում, իսկ բեխցիները մնացել էին ձեռնուռայն: Սակայն, գյուղը որքան էլ անապահով լիներ, այնուամենայնիվ, պետք է ունենար զոնե միդասյան դպրոց, որտեղ պիտի սովորեին փողոցներում տասնյակների հասնող թափառող մանուկները:

Շատերը, օրվա հրամայական համարելով, բուռն ցանկությամբ կամենում էին դպրոց կառուցելու սուրբ գործին լծվել: Այս գյուղի մի երիտասարդ՝ Արսեն Գրիգորյան անունով,

գյուղի արեւելյան մասում հողաբաժին էր նվիրել՝ դպրոցական շենք կառուցելու նպատակով՝ մեծ հույսով, որ գյուղացիները միահանուռ կլծվեն մատաղ սերնդին կրթելու եւ գյուղը խավարի ու տգիտության ճիրաններից դուրս բերելու գործին :

Շրջանի ուսման ծարավ գյուղերից մեկն էր Բարաբաթունը, սակայն այստեղ ավելի ուշ էին սկսել դպրոցի շենք կառուցել: Գյուղում եւս հողի կռիվը միանգամայն քայքայել էր տնտեսությունը: Այնուամենայնիվ, բարաբաթունցիները չէին ցանկացել ետ մնալ հարեւան բնակավայրերից, վճռել էին մինչեւ սեպտեմբեր դպրոցի շենք ունենալ: Բարաբաթունցիներին մեծ օգնություն էր ցուցաբերել Մելիք-Ազարյան հանքերի կառավարիչ պ. Արամ Ֆետվաճյանը, ով դպրոցի շինությանը նվիրել էր 300 ռուբլի արժողությամբ գերաններ եւ 100 ռուբլի փող: Գյուղացիները երախտապարտ էին եւ հույս ունեին, որ այս մարդասիրական գործն անարձագանք չի մնա տեղի հանքատերերի շրջանում:

Ղափանի առաջին կրթօջախներից էր Արծվանիկի դպրոցը:(1855թ.): Գործում էր եկեղեցուն կից: Այստեղ հաճախում էին նաև հարեւան գյուղերի փոքրիկները: Դասերը սկզբում տեղի էին ունենում Խոջա Արզումանի տանը: Առաջին ուսուցիչն էր գյուղի քահանա Մեսրոպ Տեր-Ղարսիսյանը: Նա սովորել էր Տաթևում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում ու ստացել որակյալ գիտելիքներ: Դպրոցի կառուցմանը մեծ աջակցություն է ցույց տվել հաշտարար դատավոր Մովսես Բեկ Բեկզադյանը: Կրթօջախը բավականին հարմարավետ էր: Ողջ գյուղը ոգեւորված մասնակցել էր նոր շենքի բացմանը (1881-82թթ.): Ներկա էր եղել Տաթևի հոգեւոր առաջնորդը եւ հայտնի գրող Բաֆֆին, ում էլ պատվել էին հնչեցնել այս դպրոցի առաջին գանգը: Վիպասան Բաֆֆին ծիով երկար ճանապարհ անցնելուց հետո իջեւանել էր դպրոցի բակում, երկար հանգստանալուց հետո դիմել էր դպրոցի բակում խաղացող երեխաներին իմանալու՝ որտեղ է գյուղի քահանայի՝ Մեսրոպ Տեր-Հարությունյանի տունը: Այս դպրոցում իր գործունեությամբ մեծ դերակատարություն ունեցավ շուշեցի երեմ Մելիք-Շահնազարյանը՝ Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ: Արծվանիկի դպրոցը պետական դպրոցների շարքին էր դասվում: 1895թ. դպրոցը երկսեռ էր՝ տղաների եւ աղջիկների համատեղ ուսուցմամբ:

Վաղ բացված դպրոցներից էր Նորաշենիկ գյուղի ծխական դպրոցը, դպրոցի մասին հիշատակվում է դեռ 1873 թվականից: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ հիմնավորը գյուղը գտնվում էր Աճանանում (Էջմանում) համանուն գետի ձախ ափին: Գյուղից ներքեւ պահպանվել է «Ջայեզմի դոմ» իջեւանատան շինությունը, որտեղ նախկինում ապրել են պղնձագործ վարպետները: Արծանագրություններ կան մերձակայքում պահպանված եռանակ բազիլիկայում: Գյուղում կան բերդապարիսպների, եկեղեցիների, այլ նշանակության կառույցների ավերակներ: Գյուղը մինչեւ այժմ էլ ունի կանգուն եկեղեցի:

Նորաշենիկի ծխական դպրոցի վարժապետն էր Վարդան Տեր- Ավետիսյանը, ունեցել է 16 աշակերտ: Տարրական դպրոցը գտնվում էր «Ջայեզմի դոմ» շենքում: Հետագայում պարապմունքներն ընթացել են Թումանյան տոհմի հարմարեցված սենյակներում: Ի դեպ, Թումանյանը այդ գյուղի հայտնի տոհմերից են, եղել են գրագետ ու ապրել բարեկեցիկ, ակտիվ մասնակցություն են ունեցել Նորաշենիկի զարգացմանը: Ըստ մի տեղեկության (Նոր դար, 5 հունիսի 1895թ.) «**Ուսման գործի մեջ... Սողոմոն Մելիք-Աղամիրյանը մինչեւ վերջին տարիներս պահում էր Նորաշենում (Նորաշենիկ) մասնավոր դպրոց**»:

Ղափանի շրջանում 1902 թվականին գոյություն ուներ Գ. Տեր-Մարգարյանի հիմնած երկրաչափական դպրոցը Շրվենանց գյուղում եւ Մանուշար Ավագյանցի դպրոցը Գյուտկում գյուղում, որը պետական դպրոցների շարքին էր դասվել: Գ.Տեր-Մարգարյանը շատ վաղ տարիքում գնացել էր Բաբու, հետագայում դարձել նավթահանքերի տեր: Աեծահարուստ բարերարն իր միջոցներով դպրոց հիմնեց, հոգաց բոլոր ծախսերը, վճարում էր մանկավարժների աշխատավարձը եւ այլն:

Լուսավորությունը եւ կրթությունը Ղափանի գյուղերում 20-րդ դարասկզբին

Էջ 5

Դպրոցական առաջին զանգը հնչել է 1902թ. սեպտեմբերի վերջին: Դպրոցի նավակառուցողը ողջունել է «Մշակ» թերթը, տոնախմբություն են կազմակերպել շրջակա գյուղերը: Բարերար Տեր-Մարգարյանը վարիչ- ուսուցիչ է երաշխավորել էսայի Մելիք-Փարսադանյանին, նրան փոխարինել է Արշակ Արտեմի Ղազարյանը (Գորիս): 1903թ. դպրոցում սովորում էին տարբեր սոցիալական խավերից 136 աշակերտ, այդ թվում 4 աղջիկ: Ըստ տեղեկությունների մինչև 1905թ. ուսումնական առարկաների մեծ մասը դասավանդվում էր ռուսերեն: Հետագայում, երբ դպրոցը դարձավ ծխական, ուսուցման լեզուն դարձավ հայերենը: Ազգամիջյան բախումների պատճառով դպրոցը 1906թ. չի գործել: 1907թ. ավագ ուսուցիչ պաշտոնը ստանձնել է Ստեփան Ստեփանյանը (Հաղորթ), որի ջանքերով գյուղատնտեսական ուսուցման համար դրվել են որոշ հիմքեր: Հանրակրթական առարկաներից բացի այստեղ դասավանդվում էին գյուղատնտեսական գիտելիքներ: Դպրոցում դասավանդել են ուսուցիչներ Լեւոն Ղահրամանյանը (Ղարադաղ) եւ Աղավնի Սարգսյանը (Ախալքալաք), որոնք Շրվենանցում ընտանիք են կազմել: Այս դպրոց են հաճախել շրջակա գյուղերի, անգամ Գորիսի առանձին գյուղերի ուսումնատենչ մանուկները, հայ երեխաների հետ սովորել են նաեւ ադրբեջանցի երեխաներ: Ժամանակի լավագույն դպրոցներից էր համարվում Շրվենանցի դպրոցը: Շրվենանց գյուղի ավագ ուսուցիչ էր Հակոբ Այվազյանը: Ինտելիգենտ մտքի եւ զգացմունքների տեր մի անձնավորություն: Բնիկ էջմիածնցի՝ Ալիբեկյու գյուղից: Ավարտել էր էջմիածնի ճեմարանը, դիմել էր Պարսկաստան ուսուցչության, հաջողվել էր պաշտոն ստանալ Ֆրանսիական դեսպանատանը, ապա դարձել էր դեսպանի անմիջական թարգմանը: Մեծ հեղինակություն է սեր էր վայելում Ֆրանսիացիների եւ դեսպանի մոտ, եղել էր Ֆրանսիայում, տիրապետում էր ֆրանսերենին եւ ֆրանսիացու բնավորությանը: Վերադառնալով հայրենիք՝ ստանում է ուսուցչի պաշտոն՝ սկզբում Աշտարակում, ապա Ապարանում, իսկ 1910թ. ավագ ուսուցչի պաշտոնով գալիս է Շրվենանց գյուղ, որտեղ էլ զոհ է գնում իր ընկերոջ նույն դպրոցի ուսուցիչ Արմենակ Աղախանյանի վայրենի կրքերին:

Թերթը հիշատակում է Շրվենանցի դպրոցի ողբերգական դեպքի մասին, երբ ուսուցչի սպանությունից հետո դպրոցից հեռացվեց ուսուցչուհին՝ Ե.Փիրուսյանը, հարկ է համարում, որ անհրաժեշտ է գյուղական երկսեռ դպրոցում դասավանդող ուսուցիչ-ուսուցչուհին ամուսիններ լինեն: Հետագայում՝ 1910-11թթ., Շրվենանց գյուղի դպրոցում դասավանդել են ամուսիններ Արշակ եւ Սիրանուշ Սինանյանները, Միքայել Մանվելյանը: Նրանք մեծ ջանքեր են դրել երեխաների կրթության համար: Սինանյանի ջանքերով դպրոցում հիմնվել է գրադարան՝ մոտ 1000 կտոր գրքերով, բարերարի միջոցներով: Գրադարանից օգտվել են հարեւան գյուղերի ուսուցիչներն ու գրասերները: Դպրոցն ունեցել է թատերական, երգի պարի եւ այլ խմբակներ: Գործում էին գիշերօթիկ խմբեր: Եկեղեցական-ծխական դպրոցների տեսուչ Թադեոս Խզմալյանը հիշատակում է, որ Ջանգեզու-

րի ոչ մի դպրոցում այդպիսի մաքուր տետրեր ու գործավարություն չկա: Ղափանում գործող նշված դպրոցների կողքին միտք հողացավ ունենալ օրիորդաց դպրոց: Այս գործուն կարող էր կրկին օգնության հասնել «Արամազդ եւ կուլտուրական» ընկերությունները: Նրանք խրախուսում էին կրթական եւ լուսավորչական գործն այս հեռավոր ու խուլ անկյունում, կարծում էին, որ պետք է վարժուհիներ ուղարկել եւ նրանց օգնությամբ աղջիկներին դպրոցում կրթել: Նախքան այս դպրոցների բացվելը հարուստներն իրենց երեխաներին քաղաքում էին ուսում տալիս: Սակայն այս նույն ծնողները միշտ էլ անտարբեր են վերաբերվել աղջիկների կրթությանը՝ ավելորդ եւ նույնիսկ վնասակար համարելով այն: Երբ այս առիթով հարցում էին անում ծնողներին, նրանք հազար ու մի պատճառներ էին մեջբերում: Գյուղը խարխափում էր նախապաշարունքի եւ տգիտության մեջ: Հարկ է նշել, որ դավանցի միակ օրիորդը՝ հայտնի Սմբատ Մելիք-Ստեփանյանի քույր Վարսենիկ Մելիք-Ստեփանյանը, կրթություն էր ստացել հեռավոր Պետերբուրգ քաղաքում:

Քանի որ ընտանիքում երեխաների դաստիարակության մեջ մեծ էր մոր դերը, կարիք կար կրթված մայրերի, ովքեր պետք է մանկուց իրենց բալիկների մեջ սերմանեին կրթության կարեւորությունը եւ սովորեցնեին, որ մտավոր կրթությունն այնքան է անհրաժեշտ կյանքի համար, որքան առօրյա հացն ու ջուրը: «Գալառ» թերթի լրագրողը մտահոգված, իր օգտակար խորհուրդներն ու կոչն էր հղում աղջիկներին, որ թող չուրախանան իրենց ծնողների կապած հարուստ օժիտներով, այդ ամենը խաբուսիկ ու անցողիկ է, միայն կրթությունն է, որ որպես մշտական հարստություն կուղեկցի նրանց ամբողջ կյանքում:

Դեռեւս 1883թ. Առաջածորում Անդրեաս Մելիք-Ստեփանյանի միջոցներով դպրոց էր հիմնվել: Շուրջի թեմական դպրոցի շրջանավարտ, գավառի գրագիր Սահակ Ասծատյանը Սահակ Վարժապետն իր տանը չնչին գումարով մասնավոր դասընթացներ էր անցկացնում հայ եւ թուրք երեխաների համար: Աբգար Մուրադյանի (Ապարանցի) ջանքերով աղջիկներ են հաճախել Առաջածորի դպրոց:

1907 թվականից Առաջածոր գյուղում գոյություն ունեւ ծխական դպրոց, որը գոյատևում էր հիմնականում «Արամազդ» ընկերության տրամադրած նպաստով: Այդ ժամանակվա մարտ ամսին դպրոցը գտնվում էր մի անհարմար վարժարանի շինության մեջ, որտեղ կար 8 աշակերտական նստարան եւ մի փոքրիկ գրատախտակ: Այս ամենը նկատի ունենալով, «Արամազդ» ընկերությունը հայտարարել էր, որ դպրոցը կդադարի գործել, եթե գյուղը եկող սեպտեմբերից դպրոցի շենք չունենա, եթե հասարակությունը շարունակի անտարբեր կեցվածք ընդունել եւ չաջակցել դպրոցաշինությանը: Այս վտանգը բոլորին սթափեցրեց: Գյուղացիներից մեկը՝ Առաքել Դավթյանը, մի գեղեցիկ տեղ հողակտոր նվիրեց դպրոցի կառուցման համար: Հավանաբար ուսուցիչներից էր Առաքել Սկրտչի Դավթյանը, ով էջմիածնի հոգեւոր ճեմարանի սան էր: Առաջածորցիներին մնում էր միասնական ուժերով, համախմբված զբաղվել այս ազգանվեր գործով եւ

իրենց երեխաների ապագան դարձնել առավել հարմարավետ ու լուսավոր:

Ձեյվա գյուղի մի խումբ նորընտիր ուսուցիչներ՝ Խաչատուր Պողոսյան, Շամիր Հովհաննեսյան, Աբա Դանիելյան եւ Շամիր Սարգսյան, մեծ ջանքեր էին գործադրել եւ գյուղի չքավոր խավի երեխաների կրթության համար դպրոց կառուցել: Համագյուղացի բաքվաբնակ Գեւորգ Եղիազարյանն իր վրա վերցրեց շինության բոլոր դրամական ծախսերը, ինքն էլ ընտրվեց պատվավոր հոգաբարձու: Գնվեց մի հողակտոր՝ դպրոցի հատուկ շենք կառուցելու համար: Հիմքերը դնելուն ներկա էր տեսուչ պ. Գեորգբեկյանը: Չնայած անբարենպաստ եղանակին, գյուղացիները հավաքվել էին գուռնա դիտվել տոնական օր դարձնելով գյուղի համար այս նվիրական ուրախ ժամերը: Առաջինը հողը փորեց հողատեր Հ.Հարությունյանը, ապա ուսուցիչներ, քահանաներ, եռանդով աչքի ընկնող երիտասարդությունը եւ այլն: Ձեյվայի այս գեղեցիկ օրինակը վարակիչ դարձավ ոչ միայն հարեւան գյուղացիներին եւ երիտասարդության, այլեւ հարեւան ու բախտակից թուրք հասարակությունների համար:

Դպրոցներից մեկն էլ Եղվարդում էր բացվել: «Արամազդ» ընկերության որոշմամբ այս դպրոցը պետք էր օգտվեր նաեւ հարեւան Ուժանիս գյուղը, որ հազիվ 2 կիլոմետր հեռավորության վրա էր Եղվարդից: Ուժանիսից պահանջեցին, որ դպրոցը հիմնվի Ուժանիսում, չնայած որ Եղվարդ գյուղը երկու անգամ մեծ էր այդ գյուղից:

1881թ Ջանգեզուում շրջազայելիս Բաֆֆին հյուրնկալվել է նաեւ Եղվարդում՝ Ավետիս վարժապետի տանը (բանասիակաբ Արտաշես Ծատրյանի հայրն էր):

1908-1909 թվականներին դպրոցի շինարարությունը կանգ էր առել: Ուսումնական տարին անկանոն էր: «Արամազդ» ընկերությունն ինչ-ինչ պատճառներով ուսուցիչ չէր ուղարկել: Բայց Կուլտուրական միության լիազոր Գեորգբեկյանի ջանքերի շնորհիվ գյուղի հասանելիք նպաստից ընկերությունը միջոցներ տրամադրեց դպրոցի կառուցման ծախսերի համար: Իսկ գյուղի կալվածատեր պ. Արշակ Բեկ Մելիք Դարազյոզյանը ցանկություն էր հայտնել դպրոցի թիթեղյա տանիքի ծախսերն իր վրա վերցնել, միայն թե դպրոցը կառուցվեր:

Մասնավոր մի վարձու շենքում էր տեղադրված Շիկահողի դպրոցը: Դեռ 1901 թվականին էր գյուղը մտադրված դպրոցական շենք կառուցել: Շիկահողի Հովհաննեսը տեղեկացնում է, որ գանազան «Արտազեսներ» տարել էին ուսումնարանի համար ամբարած կրից՝ իրենց սեւ օթախները սպիտակեցնելու համար: Աջքաբաց շիկահողցիների վրա պատասխանատվություն էր դրվել ստացած պլանով ձեռնարկել սեփական դպրոցի շինությունը:

Մի քանի նկարներից է մի համրիչից բացի Շիկահողի դպրոցը ոչ մի կանոնավոր պիտույք չուներ, բաղկացած էր 3 բաժանմունքից, ուներ 60 աշակերտ, աշակերտուհիներ, ուսուցիչը եռանդուն մի երիտասարդ էր՝ պ. Ռուբեն Տեր-Հովակիմյանը: Նպատակ կար ամբողջ շրջանի ուսումնարանները միացնել եւ Շիկահողում բացել կենտրոնական դպրոց:

1878 թվականից Վաչագան գյու-

ղում գործել է մասնավոր դպրոց: Դասերն ընթանում էին Ալեքսանդր Նուրիջանյանի տանը: 1900թ.առաջին անգամ դպրոց էին հաճախել աղջիկներ՝ Նուբար Գեւորգյանը, Նաստի Վեգիդյանը, Լիզա, Վահինկա, Սաթենիկ Նուրիջանյանները, Շաշինկա եւ Վարսենիկ Օրբելյանները: 1908-1910թթ. դպրոցում ուսուցիչ էր Կոմիտասի սան վաչագանցի Գեւորգ Ղազարյանը:

Ստեփան Մելիք-Փարսադանյանի հրապարակումներից տեղեկանում ենք, որ շուրջ տասնմեկ տարի է, որ Վաչագան գյուղում գործում էր մի դասական ծխական դպրոց՝ բացված Կուլտուրական միության նախաձեռնությամբ: Վաչագանցիների համար ուսումը հրատապ պահանջ էր դարձել եւ յուրաքանչյուր անհատ հետեւում էր լուսավորության գործին: Վաչագանցիներից մեկը՝ պ. Սաղաթե Հովհաննիսյան Օրբելյանը, դպրոց կառուցելու համար գյուղի հարավային մասում նվիրեց մի կտոր հողաբաժին: Գյուղում այսպիսի մի նվերը ոգետություն էր առաջ բերում: Վաչագանցիների օրինակը չափազանց վարակիչ էր դարձել հարեւան գյուղերի համար: Համայնքում գտնվող Կուլտուրական միության լիազոր Հովհաննես Գեորգբեկյանը հորդորեց արագ ավարտին հասցնել այս կարեւոր գործը: Աշուշտ, եւս մի գյուղ դուրս կար մթից ու խավաթեր է կռնեց լուսավորության համար: Համայնքում ճշմարիտ ուղին: 1911-1912թթ. Վաչագանի դպրոցի առաջին ուսուցիչներ էին Քաջարանց գյուղի Աբրահամ Մարգարյանը (հետագայում օժվեց քահանայ), վաչագանցի Դավիթ Տեր-Հովհաննիսյանը, այնուհետեւ Տաթևի դպրոցի շրջանավարտ Միքայել Դավթյանը: 1913թ եկեղեցու ունեցած 2500ռ. դրամով բաքվաբնակ Փարսադան Նուրիջանյանի նախաձեռնությամբ եւ հոգաբարձուների խորհրդի հանգամանակ միջոցներով շահագործման հանձնվեց դպրոցական առաջին շենքը: 1917թ Վաչագանի դպրոցը տնօրինում էր էջմիածնի ճեմարանավարտ Խորեն Աթաջանյանը: Նոր մասնաշենքը է կառուցվել 1927թ.՝ իրանաբնակ վաչագանցի Արսեն Նուրիջանյանի միջոցներով:

Բաքվի «Արամազդ» ընկերության նպատակներով բացված դպրոցների թվում էր նաեւ Ազարակի դպրոցը, որը տարեկան 400 ռուբլի նպաստ էր ստանում հիշյալ ընկերությունից: Չնայած ազարակցիների անտարբերությանը, մի հանգամանք ստիպեց այս լուսավորչական գործն առաջ տանելու: 1909 թվականի հոկտեմբերին դպրոց բացելու առաքելությամբ Ազարակ էր այցելել համագյուղացի պ. Խուրշուդ Ամիրջանյանը: Նա խոստացավ դպրոցի կառուցումն իրականություն դարձնել միայն մի դեպքում, եթե համագյուղացիները մասնակցեն շենքի կառուցմանը՝ տալով քար, կիր, փայտ եւ օգնեն բանվորական ուժով: Խ. Ամիրջանյանի հեռանալուց հետո, նորընտիր տանուտեր Փ. Աղախանյանը, հուվարի 27-ին հավաքելով գյուղացիներին, միահամուռ ուժերով դրեցին դպրոցի շենքի հիմքերը:

Ազարակի դպրոցն ապագայում մեծ նշանակություն ունեցավ շրջակա գյուղերի համար: Ազարակը գտնվում էր ներքին Ղափանում, որին կից արեւմուտքում 3 կիլոմետր հեռավորության վրա, Միքաբասը (Խորանց), մոտավորապես 70 տուն (հայաբնակ), արեւելքում Դարաբաբան 5 վերստաչակի հազիվ հե-

ռու Ազարակից, որն ուներ միայն 35 տուն բնակիչ: Ազարակը բոլոր գյուղերի կենտրոնն էր, որը ստիպեց այս բոլոր համայնքների բնակիչներին միանալու եւ զարկ տալու Ազարակում դպրոցաշինությանը: Այս դպրոցի ուսուցիչ էր ճեմարանավարտ եւ լեզենդար Սմբատ Թորոսյանը: Դասավանդել է նաեւ Առաջածորի ծխական դպրոցում:

Լուրեր էին պտտվում, որ մոտակա ադրբեջանաբնակ Եմաղլու եւ Խաչատափ գյուղերը եւս ցանկացել են մասնակցել շենքի կառուցմանը: Սրա նպատակը հետեւյալն էր՝ ֆինանսական լրացուցիչ միջոցներ գերգրավել եւ հայ ու ադրբեջանցի սերունդներին համերաշխություն քարոզել հենց դպրոցական նստարանից:

Կային գյուղեր, որ ընդհանրապես դպրոց չուներին, օրինակ Փուխրուտ եւ Քրդիկանց գյուղերը: Այս գյուղերից յուրաքանչյուրն ուներ 65 տուն բնակիչ, որի կեսից շատը հարուստներ էին եւ չէին էլ մտածում կրթության ու գրագիտության մասին: Ամեն տեղ ուսման շնորհիվ լույս տարածվեց, բայց այս գյուղերում պատկերացում չուներին աշխարհի անցուդարձից: Գյուղեր կային, որ դպրոց ունեին, բայց չէին գործում, ուսուցիչների մեծ մասը պատերազմ էր մեկնել: Այդ պատճառով շատ երեխաներ հայտնվեցին փողոցներում:

Ղափանի Նորաշենիկ գյուղին մոտակա ադրբեջանցիներով բնակեցված գյուղերից մեկում՝ Օխտարում գործում էր ադրբեջանական դպրոց: Սա միակ ադրբեջանական դպրոցն էր Ղափանում: «Մեքթեբխանյում», ինչպես տեղացիներն էին անվանում, սովորում էր մոտ 20 երեխա: Այստեղ ուսուցումը ցածր մակարդակի վրա էր: Երեխաները դպրոց էին բերում ինչ գիրք ձեռքներն ընկնում էր, ուսուցիչը կհասարագետ էր: Այդ պատճառով երեխաները տարիներով սովորում էին, դպրոցից հեռանում անգրագետ: Ադրբեջանցիներով բնակեցված գյուղերը խարխափում էին խավարի ու հետամնացության մեջ:

Հետամնաց, նահապետական կյանքով ապրող Ղափանի համար շատ կարեւոր եւ ուրախալի էր նորաբողոք հասարակական գործը՝ Կ. Հ.Բ. Ը. Շյուրի բացումը գավառում: Գաղափարը նոյեմբերի 11-ին առաջ էին քաշել հանքային ինտելիգենցիայի շուրջ՝ 30 համակիր, շարունակությունը մայիսի 29-ը եղավ՝ 20 հոգանոց ժողովն ընկերության ճյուղի անդամներ ընտրեց: Նախագահ ընտրվեց Մովսես Բեկ Յուզբաշյանը, քարտուղար՝ Իվան Բեկ Մելիք-Քարամյանը: Թեկնածուներին էին բժ. Խաչատուրյանը, Մովսես Բեկ Յուզբաշյանը, Իվան Բեկ Մելիք-Քարամյանը, Սամսոն Բեկ Մելիք-Փարսադանյանը, Հովհաննես Դանիելյանը, Կոստանտին Քալանթարյանը: Ընտրությունից հետո Սամսոն Բեկ Մելիք-Փարսադանյանը եւ Իվան Բեկ Մելիք-Քարամյանը մնացին վարչության անդամ, իսկ Հովհաննես Դանիելյանը եւ Կոստանտին Քալանթարյանը՝ փոխանդամներ, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Ա. Նարինյանը, Արամ Ֆետվաճյանը եւ Ստ. Մելիք-Փարսադանյանը:

Վարչական մարմնի ընտրությունից հետո հարց դրվեց Ուղուր 2այի Բազարում



Ցուցահանդես՝ «Աստվածային կարակերգության» մոտիվներով

Սյունիքի մարզային գրադարանը Հայաստանի ժամանակակից արվեստի բանգարանի Կապանի մասնաճյուղի հետ մեկտեղ կազմակերպել էր մեր հայրենակից Արմեն Գասպարյանի գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը, որում տեղ էր գտել արվեստագետի 30 գրաֆիկական աշխատանք: «Աստվածային կատակերգություն» այսպես էր ցուցահանդեսի խորագիրը, որ հուշում էր, թե նրա թեմատիկան ներառում է միջնադարի իտալացի խոշորագույն բանաստեղծ Դանթե Ալիգիերիի հայտնի պոեմը՝ բաղկացած երեք մասից՝ «Դժոխք», «Քավարան», «Դրախտ»: Ցուցահանդեսում բացառապես անդրադարձ կար Դանթեի ստեղծագործության առաջին մասին՝ «Դժոխքին»: Ցուցահանդեսի բացման խոսքում մասնաճյուղի տնօրեն Բորիկ Մինասյանը Արմեն Գասպարյանին բնորոշեց մի արվեստագետի, ով զբաղվում է գեղանկարչությամբ, գրաֆիկայով և քանդակով և հայտնի ամուն է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում:



Սյունիքի մարզային գրադարանի արվեստի բաժնի գրադարանավարուհի Արփինե Թումանյանը ներկայացրեց Դանթեի «Աստվածային կատակերգություն» պոեմը, նրա գաղափարական բովանդակությունը, որպես գեղանկարչի ոգեշնչման աղբյուր:

«Այն թեման, որին անդրադարձել է Արմեն Գասպարյանը շատ լուրջ է, շատ խորը, նայելով նկարներին՝ կարելի է ասել, որ այստեղ արտահայտված է Աստծո ծայրը», - ասաց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Դեթոյանը:

Դանթեի «Աստվածային կատակերգություն» ստեղծագործությունը նկարագրող էլ է հանրաճանաչ գեղանկարիչ Գյուստավ Դորեն: Այս առումով Ա. Գասպարյանը նշեց, որ շատերն են անդրադարձել Դանթեի ստեղծագործությանը գեղանկարչության առումով: «Դորեի

նկարագրողները ամենահաջողվածներից են, սակայն յուրաքանչյուր նկարիչ կարող է իր հայեցակետով, յուրովի մեկնաբանել Դանթեի ստեղծագործությունում նկարագրված իրադարձությունները, սա էլ Դանթեի ստեղծագործության իմ ընկալումն է: Եվ սա իմ ստեղծած շարքի մի մասն է», - «Սյունյաց երկիր» փոխանցեց Ա. Գասպարյանը:

Արմեն Գասպարյանը սովորել է Ջորջ Հայրապետյանի գեղարվեստի դպրոց-ստուդիայում, այնուհետև ավարտել է Սանկտ Պետերբուրգի Գեղեցնի անվան մանկավարժական համալսարանի գեղարվեստական գրաֆիկական բաժինը: 1985 թվականից ստեղծագործում է այդ քաղաքում, Սանկտ Պետերբուրգի նկարիչների միության անդամ է: Գեղանկարչի խորհրդանշական աշխատել գերում է ներքին դրամատիզմով, նուրբ լիրիկայով և առեղծվածային գաղտնիքի զգացողությամբ: Նա գտել է գեղանկարի գեղարվեստական լեզուն՝ իր մեջ ներառելով դասական արվեստի ավանդույթները: Նրա աշխատանքները 1992 թվականից գտնվում են Գերմանիայի, Ֆինլանդիայի, Յուժանիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության և շատ այլ երկրների անհատական հավաքածուներում:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Աշնանացան հացահատիկի հեկտարի համար առաջարկվում է տրամադրել 60 հազար դրամ

ՀՀ կառավարությունն առաջարկում է աշնանացան հացահատիկային մշակաբույսերի փաստացի ցանված ամեն հեկտարի հաշվով ամհատույց տրամադրել 60 հազար ՀՀ դրամ:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին կառավարության հերթական նիստում հայտնեց ՀՀ գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանը:

«Հաշվարկվել է, թե որքան ավելի հացահատիկ կարտադրվի, որքան ընտանիք կօգտվի այս առավելությունից: Որոշման նախագիծը ներկայացնելիս հաշվի ենք առել մի քանի նպատակ: Այս պահի դրությամբ մեր վարելահողերի մինչև 35%-ը չի մշակվում: Այս առաջարկը կնպաստի չմշակվող հողատարածքների կրճատմանը: Նաև այն ցորենը, որը մենք պակաս ենք մշակում, ստիպված մերկրում ենք», - ասաց Խաչատրյանը:

Որոշման նախագիծով առաջարկվում է աշնանացան հացահատիկային մշակաբույսերի փաստացի ցանված յուրաքանչյուր հեկտարի հաշվով 60 հազար ՀՀ դրամ, անհատույց տրամադրել գյուղատնտեսությանը զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սեփականության կամ համայնքային հողերի վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի հիման վրա: Պետական աջակցություն տրամադրվելու է մինչև 7 հեկտար աշնանացանի համար: Պետական աջակցության օբյեկտ չեն համարվելու տնամերձ հողատարածքները:

armenpress.am

Հայտարարություն

Կազմակերպությունը կվարձակալի 150-200 քառ. մետր մակերեսով պահեստային տարածք: Պահեստային տարածքը պետք է գտնվի Սյունիքի մարզի Կապան քաղաքում կամ դրան հարող տարածքներում (մինչև 5 կմ շառավիղով): Տարածքն անհրաժեշտ է կազմակերպության գույքի պահպանման համար: Վարձատուն պատասխանատվություն է կրում գույքի պահպանության համար:

094 11 98 44 Արթուր

գրադարան-ընթերցարան բացել: Բոլոր ժողովականները միաձայն որոշեցին, որ ընկերության առաջին գործը պիտի լինի այս խնդրի լուծումը, որի համար եղբայրներ Ապոստոլ Ֆեոդորովիչ և Իվան Գեորգևիչ Կոնդուրովները խոստացան ժամանակավոր, անվարձա-հատույց հատկացնել 2 սենյակ՝ ապահովված էլեկտրական լուսավորությամբ: Պետք է նկատել, որ Կոնդուրովները նման դեպքերում միշտ մեծ ուրախությամբ իրենց համեստ ծառայությունն էին առաջարկում հասարակական գործունեության համար և միշտ արժանանում խրախուսանքի և ջերմ շնորհակալական խոսքերի: Ընկերության ընդհանուր անդամների թիվը հասել էր 50-ի: Նման ընկերությունների նպատակը ժողովրդին, գյուղացիությանը ծառայելն էր, տնտեսության զարգացումն ապահովելը, գյուղացիներին խավարի ճիրաններից դուրս բերելը: Անդամակցության համար իրավիճակ էին գյուղացիության խնդիրներին ծանոթ նաև գյուղական ուսուցիչներ: Նախաձեռնողները միահամուռ այն կարծիքին էին իսկ ինչու՞ չհամախմբվել միասին, ինչու՞ միասնական ուժով չկրել այս նվիրական գործի ծանր բեռը:

Աշխարհի անցողիկ լուրջ և մի խուլ գավառ էր Դափանը, որի համար մեծ նշանակություն ուներ երկաթգծի գոյությունը: «Գավառ» թերթում լրագիր Ս. Թորոսյանը հայտնում է, որ Թիֆլիսի թերթերից մեկից տեղեկա-

ցել էր Ջուլֆա-Եվլախյան երկաթուղային գծի գործարկման մասին, որը կգա լուսավոր երկրների հետ կապելու այն Դափանը, որն առաջադեմ մտքի, կրթության շնորհիվ կբացի քաղաքակրթության դռները:

Չնայած հալածանքներին և բազմաթիվ խոչընդոտներին, այնուամենայնիվ գյուղերում բացվեցին դպրոցներ: Չունենալով պետական հովանավորություն՝ հայրոց դպրոցը պահվում էր հասարակական կազմակերպությունների, առանձին անհատների և գլխավորապես, հայ առաքելական եկեղեցու միջոցներով:

Աջքի համար շատ սովորական է այսօր Կապանի ամեն մի անկյունում տեսնել կրթօջախներ, գիտելիքի պահպաններ: Այսօր, ուրախությամբ փաստենք, որ մեր դպրոցն ունի բացառապես պետական հովանավորություն, ստիպված չէ այստեղից այնտեղից միջոցներ մուրալ: Սակայն չպետք է մոռանալ ինչ գնով ստեղծվեցին այդ ինստիտուտները, ինչ ջանքեր պահանջվեցին այն հիմնադրողներից: Այն ժամանակ ամեն մի լուսնա ներդրում էր դպրոցի քարը քարի վրա դնելու համար, իսկ այսօր քիչ չեն դեպքերը, երբ շատ գյուղերի դպրոցի տնօրեններ ոչ թե ներդնում, այլ հանուն սեփական բարեկեցության, պետության՝ դպրոցին հատկացված սուղ միջոցներից յուրացնում են՝ վտանգելով կրթության որակը: Չմոռանալ, որ այսօր, ինչպես և մեկ դար առաջ կրթության, արդյունավետ կազմակերպումը և

դպրոցին հատկացված միջոցների նպատակային օգտագործումն օրվա հացի պես անհրաժեշտ են գյուղերի համար, որոնց բնակիչները հիմնականում գտնվում են աղքատության եզրին և իրենց երեխաների գրագետ ու հաջողակ ապագան սեփական միջոցներով, ցավոք, այսօր ևս կառուցել չեն կարող:

Մարդկությունը որքան զարգանում, այնքան կարելի է կրթության դերը, հատկապես արժեւորվում է որակյալ և ժամանակակից կրթության դերը մեր կյանքում: Տակավին երիտասարդ անկախ Հայաստանի համար կրթությունն է, որ ապահովելու է երկրի հզոր զարգացումը, տնտեսական առաջընթացն ու մտքի թռիչքը: Կրթված, պայքարող, իրենց իրավունքներին տիրապետող անհատներն են, որ հեղափոխական ջախը ձեռքներին բարեփոխումները կան դասական իմաստով լուսավորությունը հասցնելու են մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներ:

- Աղբյուրներ**
- 1.Վիքիպեդիա ազատ հանրագիտարան
 2. Թերթեր՝ «Գավառ», «Մշակ», «Արև», «Աշխատանք», «Ալիք» «Նոր դար», «Ազգագրական հանդես»,
 - 3.Անուշավան Աղամյան «Կապան, կրթության ոսկեդար, 1900-2000», 2004թ.
 4. Ռուբինա Փիրումյան, «Հայկական հարցի պատմություն»:

Խանաճախում ամբողջությամբ այրվել է չորս տուն



Սեպտեմբերի 9-ին «911» ծառայությունում ահագանգ է ստացվել, որ Սյունիքի մարզի Խանաճախ գյուղում այրվում են տներ:

Տեղի համայնքապետ Ներսես Շադունցը տեղեկացրել է՝ «Գիշերը ժամը 2-ին հրդեհ է բռնկվել, 4 բնակելի տները ամբողջությամբ այրվել են, տները միասին են հրդեհի բռնկվել, քանի որ խիտ բնակեցված թաղամաս է: Չոհեր և վիրավորներ չկան, հրդեհի բռնկման ժամանակ բնակիչ-

ներին հասցրել են տարհանել, ամբողջ գյուղն օգնություն է ցուցաբերել, ԱԻՆ-ի հետ միասին, որպեսզի մեկուսացնեն հրդեհը: Առավոտյան ժամը 7-ին կարողացրել են հանգցնել կրակը: Նախնական ոչ մի վարկած չկա, թե ինչու է հրդեհ բռնկվել, բնություն է ընթանում: Բնակարաններում եղել են 4, 6, 1, 3 գյուղացիներ»:

Գյուղապետի խոսքով՝ հանձնաժողով է ձևավորվել վնասի չափը որոշելու համար:

Մանկավարժն ու հայրենի գյուղի փարեգիրը

Սեպտեմբերի 12-ը Չոնիկ Օրբեյանի ծննդյան օրն էր: Նա դարձավ 90 տարեկան:

Չոբեյաններն իրենց մեջ պարունակում են մի լուսավոր խորհուրդ, հետադարձ մի հայացք ձգել, արժեւորել արած-դարձը:

Չոբեյարի գիտակցական կյանքն անցել է մի ոլորտում մանկավարժություն, որին հավատարիմ է մնացել մինչև վաստակած հանգստի անցնելը...

Բնօրրանը Կապանի տարածաշրջանի Վաչագան գյուղն է: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի յոթնամյա, միջնակարգը՝ Կապանի թիվ 1 դպրոցում: Նրա սերնդի պատանեկությունն ու երիտասարդությունը համընկան Մեծ հայրենականի և հետպատերազմյան դժվարություններով լի տարիների հետ: Հայրը 1942-ին մեկնեց պատերազմ, ընտանիքի հոգսը մնաց 14-ամյա պատանու ուսերին: Ընտանիքում չորս որդիներից ավագն էր, ուստի փոխարինեց ռազմաճակատ մեկնած հորը՝ փորձելով եղբոր՝ Օճիկի հետ հոգավ ընտանիքի համապագայի հոգսերը: Իսկ դրանք անհատում էին: Այդ մասին անսքող թախիծով է գրում իր հեղինակած «Մերոնք» գրքում:



կրթություն ստանալու ժամանակը: Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում ավարտեց՝ աշակերտելով ժամանակի նշանավոր գրականագետներին և լեզվաբաններին: Այդ մասին հպարտությամբ է վերհիշում, հուշեր պատմում:

1955-ին անցել է մանկավարժական աշխատանքի: Չորս տասնամյակից ավելի մայրենի լեզու և գրականություն է դասավանդել

Տանձավերի, Հանքավանի, Լեռնաձորի, Ողջիի, Վաչագանի, Լեռնահանքերի, Կապանի թիվ 1, 2, 10 դպրոցներում (մեծ մասամբ՝ ուսման վար են տնօրեն): Բյուրավոր պատանիների և աղջիկների հասու է դարձրել ոսկեդեմիկ հայերենի նրբությունները:

Վաստակած հանգստի է անցել 1998 թվականին: Պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով: Թողել է դասավանդման, դպրոցա-

վարման հարուստ փորձ: Իր ապրած տարիների ընթացքում ստեղծել է հարուստ անձնական գրադարան, որում հաշվվում է 3000 կտոր գրականություն, որից օգտվել են մտերիմները և դրկիցները:

Լինելով բանասեր՝ գրի է առել հայրենի Վաչագան գյուղի գերդաստանների նահապետների, նաեւ պարզ ու հասարակ գյուղացիների կյանքին առնչվող զվարճալի պատմություններ, զավեշտական միջադեպեր, հուշեր, սրամտություններ, կոլտնտեսային կյանքի հարուցած դժվարությունները: Այդ ամենը գեղարվեստական պատմությունների տեսքով ամբողջացել է վերը հիշատակած «Մերոնք» գրքում, որ լույս է ընծայվել 2005 թվականին՝ կրտսեր որդու՝ Սերգեյի հովանավորությամբ: Դրանով իրեն միխթարված է համարել, որ անդամնալի կրթտից փրկել է վաչագանյան հարուստ բանասիրության պատանիները:

Ափսոսանք է հայտնում նաեւ, որ հայրենի գյուղում օջախներ են մարում, դռներ փակվում, որոշ տներում այլեւս լույս չի վառվում:

Չոնիկ Օրբեյանը բարեկամասեր և գրուցասեր անձնավորություն է, ոյուրին է նրա հետ շփվելը, բանգի մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝

րով և կատակով, ժողովրդական բառ ու բանով, հիշում է բազում զվարճապատում պատմություններ, դրանք հաճույքով ներկայացնում գրուցակցին: Սիրում էր սեղաններ դեկավարել, նրա թամադայությամբ են անցել բազում հարսանիքներ և ծնունդներ: Ղեկավարել է նաեւ սգո արարողություններ՝ վշտի մեջ եղած մարդկանց սփոփել իր խոսքով:

Այժմ էլ, չնայած առաջացած տարիքին, փորձում է իր խորհուրդներով օգտակար լինել շրջապատին: Նրան ավելի շատ հուզում է պատերազմի և խաղաղության խնդիրը, հարեւան հանրապետության նախագահի ռազմատենչ կոչերը լրջորեն անհանգստացնում են կյանքի ինը տասնամյակը բոլորած մարդուն: «Պատերազմին՝ ոչ, բոլոր հարցերը պիտի լուծվեն կլոր սեղանի շուրջ, դիվանագիտական ճանապարհով: Թող բոլոր մարդիկ ապրեն խաղաղ երկնքի տակ»:

Չոբեյանը նշում է երեք որդիների, թոռների, հարազատների ու մտերիմների շրջապատում:

Մեզ էլ մնում է հոբեյարին մաղթել ամուր առողջություն:

ԿԱՀՐԱՍ ՕՐԲԵՅԱՆ

Նարեկ Ղահրամանյան. «Նախընտրում եմ կենդանի, անմիջական շփումները մարդկանց հետ»

Ձրույց Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանի հետ

էջ 2
-Ուզում եմ զրույցն այլ հարթություն տեղափոխել. Դուք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ եք, և Կապանը պատրաստվում է համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության: Հանրության մեջ, բնականաբար, տարբեր թեկնածուների անուններ են շրջանառվում: Նարեկ Ղահրամանյանը կլինի՞ համայնքի ղեկավարի թեկնածու:

-Հստակ ասեմ՝ չեմ առաջադրվելու:

-Դա Ձե՞ր որոշումն է, թե՞ կուսակցության:

-Կուսակցության վարչության, ինչ-որ չափով՝ նաեւ իմ, մեծամասամբ՝ կուսակցության վարչության:

-Հիասթափվե՞լ եք պաշտոնից, թե՞ ...

Իմ պաշտոնից հիասթափվելը հնարավոր չէ իրականում: Պարզապես, երբ գալիս էի համայնքը ղեկավարելու, իմ պատկերացումներն այսքան ծանր չէին, եւ բանը հիասթափվելու մեջ չէ, այս աշխատանքների ողջ ծավալը չէի պատկերացնում: Ամեն դեպքում իմ կուսակցությունն այդպես է որոշել:

-Ձեր հետագա ճակատագիրն էլ կորոշի կուսակցությունը:

-Իմ ճակատագիրն ինձնից բացի ոչ ոք չի կարող որոշել: Ինչ վերա-

բերում է քաղաքական ճակատագրին, դա կուսակցության և իմ որոշելիքն է: Նման հարց չի բնորոշվել: Ես մինչեւ հոկտեմբերի 21-ը համայնքապետ եմ:

-Կարո՞ղ եք Ձեր շուրթերով հայտարարել, որ համայնքի ղեկավարի թեկնածուն լինելու է ...

-Ես չեմ կարող ամուսն տալ, քանզի վարչությունը պաշտոնապես հայտարարություն չի արել: Դեռեւս առաջադրումներ չկան, ոչ ոք չի առաջադրվել, ամիմաստ է իրադարձություններից առաջ ընկնելը:

-Առհասարակ բոլորին հետաքրքրում է, թե ի՞նչ տվեց թավշյա հեղափոխությունը Սյունիքի մարզին, Կապան համայնքին:

-Ժամանակը շատ կարճ է հետեւություններ անելու տնտեսական արդյունքների առումով, բայց բարոյական օգուտ տվել է, դա ամենից քիչ է: Մարդիկ ձեռքբազատվել են ինչ-ինչ բարոյությունից, պաշտոնյային չեն նայում ներքեւից. դա շատ բան է նշանակում, կասե՛ի՝ հաղթանակ է:

-Կաղորային փոփոխություններ հասցրեցի՞ք անել մինչեւ հիմա, ո՞ր ոլորտներում:

-Եւ արել եմ և անելու եմ, հատկապես համայնքի մեջ մտնող բնակավայրերի վարչական ղեկավարների նշանակման առումով: Չէի կարող հանդուրժել այն երեւույթը,

երբ Մոսկվա արտագնա աշխատանքի մեկնած անձն այստեղ վարչական ղեկավար է համարվում: Եւ չեմ կարծում, թե որեւէ մեկը կհանդուրժեր: Համենայն դեպս հայեցողական պաշտոններ զբաղեցնողներն ազատվել են փոխքաղաքապետի և այլն:

-Կաղորեք նշանակելիս ի՞նչ սկզբունքով եք առաջնորդվում, կուսակցական գործո՞ւնն եք հաշվի առնում, թե՞ ...

-Պրոֆեսիոնալիզմը, ժողովրդի կողմից ընդունված պետք է լինի նաեւ:

-Հանրության հետ շփվելու, ինչպես տեսնում ենք, Ձեզ համար ընդունելի ձեւերից մեկը սոցիալական ցանցերն են, այդպե՞ս է:

Ոչ այնքան, սոցիալական ցանցերով ներկայացնում եմ իմ տեսակետները, կատարված աշխատանքները, բայց նախընտրում եմ կենդանի, անմիջական շփումները, ինչը հնարավորություն է տալիս ավելի մոտիկից ծանոթանալ մարդկանց հուզող խնդիրներին:

Հարցազրույցը՝ Վահրամ Օրբեյանի

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ներկայացրեց Կապան համայնքի ղեկավարի իր թեկնածուին



Սեպտեմբերի 16-ին Կապանի Գարեգին Նժդեհի 16 հասցեում տեղի ունեցավ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի բացման արարողություն, ինչի առիթով կուսակցության Կապանի կառույցի անդամներին շնորհավորեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: Այդ օրը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ներկայացրեց Կապանի համայնքի ղեկավարի հոկտեմբերի 21-ին կայանալիք ընտրությունների իր թեկնածուին՝ Նարեկ Բաբայանին: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ վարչապետի առաջին տեղակալ Արարատ Միրզոյանը,

փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, տարածքային կառավարման նախարար Սուրեն Պապիկյանը, Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը, Կապանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանը: Երեւանից ժամանած բարձրատիճան հյուրերը ներկայացրեցին թավշյա հեղափոխությունից հետո երկրում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակը, դրականորեն բնութագրեցին Կապան համայնքի ղեկավարի թեկնածու Նարեկ Բաբայանին:

-Լիառույս ենք, որ այս ընտրություններում մեր քաղաքական թիմը կարծանագորի հաղթանակ է, եւ դրանով Կապանը կունենա առանց ընտրակաշառքի, առանց կաշկանդվածության, քաղաքացիների արդար քվեի միջոցով ընտրված համայնքապետ,- իր ելույթում ասաց Սուրեն Պապիկյանը:

Համայնքի ղեկավարի թեկնածու Նարեկ Բաբայանը շնորհակալություն հայտնեց մայրաքաղաքից ժամանած հյուրերին և իր թիմակիցներին՝ վստահության համար, նաեւ հույս հայտնեց, որ հոկտեմբերի 22-ին Կապան համայնքում «Իմ քայլը» դաշինքից լինելու է նոր համայնքապետ:

ԿԱՀՐԱՍ ՕՐԲԵՅԱՆ

Այսօրվա Երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԹԱԿ ՊՍԱՍՏԻՄԱՍՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Գեղ. (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Այսօրվա Երկիր» պարտադիր է:

Փոքր, խոնքը հասնելու է հոկտեմբերի 21-ին: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԳ - ՇԱՄՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Թավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 19.09.2018թ.:

QR կոդ